




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


2405
95

C. 1920/1301

Վ. ԼԵՈՆՏՅԵՎ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՄԱՐՏԻԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ



Յ Ե Ր Ե Վ Ա Ն
1928

1991/2310
1 MAR 2010

U
Cat 881
355.5
L-38

4. ԼԵՈՆՏՅԵԿ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՄԱՐՏԻԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ



50-05503

ՀԱՅԿ. ՀՐԱՁԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻՐ ԲԱՂԲԱԺՆԻ ԽՄԲ.—ՀՐԱՏ. ՄԱՍ

19283

ԵՐԵՎԱՆ

102 MAY 2013

42-199

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԺՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

В. ЛЕОНТЬЕВ
Одичная подготовка
бойца



60220-67

Քրտակ. № 1070 Բ. Տիրաժ 2000. Պատվեր № 419.

Հայպոլիգրաֆի 2-րդ տպարան--Յերեվան

1. ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Զորքերի վարժությունը բաղկացած է յուրաքանչյուր առանձին մարտիկի մարտական գործունեությունից, պատրաստությունից և ամբողջ ջոկի, դասակի, վաշտի, գումարտակի և այլ միավորությունների պատրաստությունից: Մարտիկի պատրաստությունը բաժանվում է անհատական և ջոկի ու դասակի կազմի մեջ գործելու վարժությունների:

Ջոկի կազմի մեջ գործելու համար պատրաստության ժամանակ յուրաքանչյուր առանձին մարտիկ սովորում է կապել իր գործողությունները հարևանի և ամբողջ ջոկի գործողությունների հետ: Դասակի կազմով վարժության ժամանակ յուրաքանչյուր մարտիկի գործողությունները կապվում են զնդացրերի աշխատանքի հետ:

Զորամասերի պատրաստություն ասելով, հասկացվում է վարժության այն շրջանը, յերբ սովորում են վոչ միայն մարտիկները, այլև հրամատարները, այսինքն՝ կատարվում է զորամասերի մարտական կոփումն իրենց հրամատարների գլխավորությամբ:

Անհատական վարժությունն այնպիսի գիտելիքների ու վարարկների (պրիյոմների) ուսումնասիրություն է, վոր պահանջվում են մարտիկների համար, յերբ վերջիններս գործում են անհատապես, ինքնուրույն կերպով:

Անհատական վարժության ժամանակ կարմիր

բանակայիններին տրվում է նախնական պատրաստություն, վորն անցնելուց հետո կարելի լինի հաջողությամբ կարգի բերել մարտիկի ուսուցումը ջուրի ու դասակի կազմով: Բայց այդ չի նշանակում, վոր ջուրի կազմով պատրաստությունն սկսվում է միայն այն ժամանակ, յերբ արդեն մշակված կլինեն անհատական վարժության բոլոր հարցերը: Անհատական վարժության մի քանի բաժիններ, ինչպես որին նաև՝ «կողմնորոշումը կողմնացույցով», «ծանոթացումը հեռախոսին» և այլն կանցնեն և այն ժամանակ, յերբ արդեն սկսել են ջուրի կազմով պատրաստությունը:

Անհատական մարտավարական պատրաստության ժամանակ յուրաքանչյուր մարտիկ պետք է.

1. Սովորի հասկանալ տեղանքը ռազմական դործի տեսակետից և կարողանա տեղանքին տալ մարտական գնահատական:

2. Սովորի ռազմագործել տեղանքը, վորպես ծածկարան հակառակորդի աչքից ու գնդակից՝ թե տեղում դասավորված և թե շարժման միջոցին:

3. Կարողանա ռազմագործել տեղանքը կրակ մղելու համար՝ թե պաշտպանության և թե հարձակման ժամանակ:

4. Սովորի տեղաքն ու հակառակորդին գիտելու վարարկներին (պրեյմիներին):

5. Ուսումնասիրի կողմնորոշման վարարկները տեղանքում (այսինքն կարողանա ճանաչել յերկրի կողմերի ուղղությամբ իրենց դորքերի, հակառակորդի, հարևանների դասավորությունը):

6 Ուսումնասիրի կապի ամենապարզ վարարկները:

7. Ուսումնասիրի գիտակալի պարտականու-

թյունները հետախուզության և յերթական պահպանման մեջ:

8. Սովորի կրել ժամապահի ու նրա ռզնականի, գաղտնքի կազմի ու պարեկի պարտականություններն անշարժ պահպանությունում:

9. Ծանոթանա գիշերով կատարած աշխատանքների առանձնահատկություններին:

Այս դրքում կխոսվի հենց այն մասին, թե ինչպես և կատարվում մարտիկի մարտավարական անհատական պատրաստությունը:

Անհատական վարժության ժամանակ հնարավորություն կա մշակելու յուրաքանչյուր մարտիկին առանձին, իմանալու նրա լավ ու վատ հատկությունները և վերացնելու թերությունները: Անհատական վարժությունը հանդիսանում է կարմիր բանակայինի ամբողջ պատրաստության հիմքը: Վորքան ամուր և լավ է դրված այդ հիմքը՝ այնքան ավելի ամուր և կայուն կկառուցվի ամբողջ շենքը: Անհատական վարժության ժամանակ ստացած բոլոր գիտելիքներով ու վարարկներով կարմիր բանակայինը կվարժվի հետագա բոլոր պարապմունքների համար՝ ջուրի, դասակի և այլ միավորություններում գործելու նպատակով:

Պարապմունքները տարվում են ջուրի հրամատարի ձեռքով: Ուսուցման մի քանի հարցեր միայն, վոր պահանջում են հատուկ գիտելիքներ, հմտություն ու փորձառություն, տարվում են դասակի կամ վաշտի հրամատարի կողմից: Բայց այս դեպքում ևս ջուրի հրամատարը պետք է հոգ տանի գիտելիքները խորացնելու մասին, բացատրելով այն, ինչ թույլ են յուրաքանչյուր կամ վատ են հասկացել:

Ամբողջ վարժությունն անցնում է գլխավորապես դաշտում, այնպիսի պարագայում, վորն այսպես

թե այնպես հիշեցնում ե մարտական պարագան:

Յուրաքանչյուր պարապմունք պետք է տանել այնպես, վոր մարտիկն, ըստ հնարավորին, ինքը հասնի ամեն ինչի: Այն ժամանակ ուսումնասիրվող հարցն ավելի խորը կնստի նրա գլխում և ձեռք կրիր-վի գիտակցականություն: Դրա համար հարկավոր է. — նախ՝ հմուտությամբ դնել այնպիսի հարցեր, վորոնք դրդեն կարմիր բանակայինն ընդունելու այս կամ այն վորոշումը կամ գործողությունը. յերկրորդ՝ որինակներ բերել առորյա կյանքից և յերրորդ՝ մի քանի պարապմունքներ տանել փոքրիկ խնդիրներով ձևով:

Ջոկի հրամատարը թե՛ միանգամից ցույց է տալիս կամ բացատրում է ամբողջ ջոկին, ըայց ուսուցումը տանում է յուրաքանչյուր կարմիր բանակայինի հետ առանձին, ստուգելով կատարումը: Հրացանաձիգներից մեկի սխալները պարզելուն պետք է մասնակից դարձվեն մյուս կարմիր բանակայինները: Այդ վո՛չ միայն աշխուժացնում է պարապմունքները, այլև ստիպում է բոլոր սովորողներին ավելի ուշադրությամբ վերաբերվելու դեպի ուսումնասիրվող հարցը կամ վարարիլը: Այլ բան է, յերբ խնդիրը ցույց է տալիս հրամատարը և միանգամայն այլ է, յերբ այդ սխալն ուղղում է նույնպիսի հրացանաձիգ:

Վորպիսզի հրացանաձիգը ավելի գիտակցաբար վերաբերվի դեպի յուրաքանչյուր պարապմունք, այսինքն՝ հստակնա թե ինչ են նրան սովորեցնում և ինչ արդյունք են ուղում ստանալ նրանից, յուրաքանչյուր պարապմունքի սկզբից պետք է բացատրել նպատակը և թե՛ ինչ ձևով պետք է տարվի պարապմունքը:

Պարապմունքների ծրագիրն ու դասացուցակը

կազմում են վաշտի և դասակների հրամատարները: Ջոկի հրամատարի պարտականությունը մնում է միայն լավ պատրաստվել յուրաքանչյուր պարապմունքի համար: Այդ պատրաստությունը բաղկացած է նախ հրահանգչական պարապմունքներից, վոր տանում է դասակի հրամատարը, և ապա՝ ինքնուրույն աշխատանքից:

Ցուցումներ ստանալով դասակի հրամատարից, Ջոկի հրամատարը, կարգում է նրան ցույց տված ձեռնարկները (քաղվածքներ կանոնադրից և այլ գրքերից), և ծանոթանում է այն անդանքին, վորտեղ կայանալու յեն պարապմունքները: Դրանից հետո, նա պարապմունքների ժամանակ ղեկավարելու համար կազմում է անպայման ծրագիր-կոնսպեկտ, մտավորաբար հետևյալ ձևով.

1. Պարապմունքների քեման, այսինքն՝ այն ուրակ, վորով պետք է գրադվեն:
2. Պարապմունքների ցայառակը, այսինքն՝ ինչպե՛ս պետք է ձգտեն այդ պարապմունքներում:
3. Ուսուցման ծրագիրը, այսինքն՝ ինչ հարցեր են նշված մշակելու համար:
4. Պարապմունքների կազմակերպումը, այսինքն՝ յերբ և վորտեղ պետք է կայանա պարապմունքը, ով և վորտեղ պետք է պատկերացնի հակառակորդին, ինչպիսի ցուցանանքներ պետք է վերցնել, վորքտն սնափամփուշտ, ինչպիսի թիրախներ են հարկավոր. ինչպիսի պայմանական նշաններ են սահմանվում հակառակորդը պատկերացնողին ղեկավարելու համար, մարտավարական խնդիրը:
5. Ուսուցման պլանը, այսինքն՝ ցույց է տրվում քայլ առ քայլ պարապմունքը տանելու կարգը: Ասածներս պարզելու համար բերենք հետևյալ որինակը.

Ուսուցման քեման՝ դիտակալի ծառայությունը հետախուզությունում:

Ուսուցման նպատակը՝ սովորեցնել կարմիր բանակայիններին դիտակալների շարժման և տեղական առարկաները զննելու տեխնիկան:

Ուսուցման ծրագիրը. ընդհանուր հասկացողություն հետախուզության, նրա նպատակների ու խնդիրների մասին: Հասկացողություն հետախուզական դետեքի՝ մի բնագիծից դետի մյուսը ծածկված շարժվելու, շարժման ժամանակ դիտելու տեխնիկան, առանձին տան, թփուտների ու բարձունքների զննելու վարարկները: Դիտակալների կապը կորիզի հետ և իրար միջև:

Ուսուցման կազմակերպությունը. 1) պարապմունքի վայրը, որինակ՝ շրջանաձև ուղին համաձայն քարտեզի կամ սխեմայի (տես նկար № 1). Գերեզմանատնից ճանապարհով մինչև ճանապարհների խաչմերուկը ջրհորի հետ. այնուհետև՝ ճանապարհով դեպի Կուսիկովցի գյուղը մինչև թփուտները. հետո՝ կաժանով մինչև Բիկովո—Իվանովկա ճանապարհը և վերջապես՝ այդ ճանապարհով դեպի Բիկովո:


2) Այդ պարապմունքի համար հակառակորդ չի պատկերացվում: Բոլոր կարմիր բանակայիններին տրվում է մի-մի պահուսնակ վարժական փամփուշտ:

3) Պարապմունքը բաժանվում է չորս շրջանի. առաջին՝ գերեզմանատնից մինչև ջրհորը. յերկրորդ՝ ջրհորից մինչև թփուտները. յերրորդ՝ թփուտներից մինչև բարձունքը. չորրորդ՝ բարձունքից մինչև Բիկովո գյուղի հուսիս-արևմտյան ծայրամասը:

4) Խնդիրները. ա) պարապմունքի առաջին և յերկրորդ շրջաններում, այնպես ինչպես մոտավորապես այդ խնդիրները պետք է տա ջուկի հրամատարը.

Հակառակորդի փոքրիկ զորամասերը հայտարեր վաժ են Կուսիկովցի և Իվանովկա գյուղերում: Մեր վաշտը դասավորած է Բիկովոյում, հետագայում խնդիր ունենալով հարձակվել Կուսիկովցու վրա:

Մեր ջուկին հրամայված է հետախուզել հակառակորդին գերեզմանատնային ճանապարհների խաչմերուկի մոտ յեղած ջրհոր-թփուտներ և ապա դեպի Կուսիկովցի գյուղը տանող ճանապարհի ուղղությամբ: Դեպի Իվանովկա տանող ճանապարհով ուղարկված է 3-րդ վաշտի հետախուզությունը:



ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՈՏԱՎՈՐ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՔԱՐՏԵՋՈՎ

Դետքում նշանակում եմ ընկ. ընկ. Իվանովին և Պետրովին: Ավագ ե Իվանովը: Դետքը պետք ե շարժվի դեպի ճանապարհի մոտ գտնվող ջրհորը և ապա՝ դեպի Կուսիկովցու ուղղությամբ մինչև թփուտները: Յևս կորիզի հետ միասին կշարժվեմ նույն ուղղությամբ 200—250 մետր յետևից:

Պայմանական նշաններն են.—

«Կանգ առնել» — ձեռքով շարժումը դեպի ցած:

«Հառաջ» կամ «դեպի մի կողմ» — ձեռքով մի քանի անգամ թափահարում շարժման ուղղությամբ (հառաջ, աջ կամ ձախ):

«Հակառակորդ» — ձեռքը բարձրացնել վեր:

«Հակառակորդ չկա» — ձեռքի թափահարում դեպի իրեն (կանչելու նշան):

«Հավաք» — գլխարկով թափահարում գլխի վրայով:

բ) պարապմունքի 3-րդ և 4-րդ շրջանների համար խնդիրներ (կազմվում են մոտավորապես նույն ձևով, փոխվում են միայն կետերը և ուղղությունը, շնորհիվ նրան, վոր վարժությունը խիստ փոխվում ե դեպի մյուս կողմը):

5) ԱՆՈՒՆԳՄԱՆ ԱՎԱՆՔ.

1. Յեւման կետում (գերեզմանատանը) պետք ե զրույց ունենալ հետախուզության նպատակների ու խնդիրների մասին: Հասկացողություն տալ ջոկի հետախուզական ծառայության մասին:

2. Ջոկել 2 կարմիր բանակային, վորպես ղիտակալ, բացատրել, նրանց պարազան, խնդիրը և պայմանական նշանները: Ստուգել, թե վորքան են բոլոր կարմիր բանակայիները յուրացրել այդ:

3. Ոժանդակիչ հարցերով վորոշել. դիտակալների մարտական պատրաստության միջոցները, առաջին

դիտակիտ և դեպի այդ դիտակետը դիտակալների առաջխաղացման միջոցները, առանձին տնակը զննելու վարարկները:

4. Դիտակալների շարժումը: Հրամայել մյուսներին նկատել դիտակալների աշխատանքում յեղած թերությունները:

5. Ջրհորին մոտենալը: Դիտակալների գործողությունների վերլուծումն ամբողջ ջոկով: Ջոկել 2 ուրիշ կարմիր բանակային խնդիրը յերկրորդ շրջանում շարունակելու համար: Այդ շրջանն ավարտել վերլուծումով, յերբ կհասնեն թփուտներին: Ուշադրություն դարձնել թփուտները զննելու վարարկների վրա:

Կոպիտ սխալների դեպքում կրկնել այդ շրջանը: Վերլուծումից հետո 25 րոպե հանգիստ:

6. Յերրորդ շրջանի համար ջոկել 2 նոր կարմիր բանակային: Անցնել բարձունքը զննելու տեխնիկան: Վերլուծումը բարձունքի մոտ:

7. Ջրհորի շրջանը՝ նույն կարգով: Նրանից հետո ընդհանուր վերլուծում Բիկովոյի հյուսիս-արևմտյան ծայրամասում:

Կազմած կոնսպեկտին կցվում ե սխեման:

Նման կոնսպեկտ կազմելուց յերբեք չի կարելի հրաժարվել, ինչպիսի պարապմունք ել, վոր լինի Միզանից շատերն այսպես են դատում, «պարապմունքն հեշտ և, կանցկացնեմ առանց վորևե բանի...»: Իսկ յերբ սկսում ենք տանել պարապմունքը, հաճախ փչացնում ենք գործը, և միայն այն պատճառով, վոր չկա պլան, չեղվում ենք նպատակից և վարժության ծրագրից:

Պլան — կոնսպեկտը պետք ե ունենա պարապմունք տանող յուրաքանչյուր հրամատար: Իհարկե, ավելի զործված հրամատարն այդպիսի պլան — կոնսպեկտ կա-

րող ե կազմել ավելի կարճ, ամփոփ ձևով: Իսկ յերիտասարդ հրամատարը, ընդհակառակը, պետք ե կազմի ավելի մանրամասն, ստուգելով իրեն մանր բաներով, վորովհետև յերբեմն մանր յերևույթները, յիթե ժամանակին չնախատեսվեն, կարող են փչացնել ծրագիրը: Այդ բոլորը կախված կլինեն այս կամ այն հրամատարի պատրաստությունից ու փորձառությունից:

Վորպեսզի կարմիր բանակայիններն ավելի զիտակցաբար և ավելի պարզ յուրացնեն մարտավարական ուսուցումը, զորամասերում՝ նորեկ կարմիր բանակայինների ուսուցման սկզբին՝ կատարում են զորքի զանազան տեսակներից (հետևակ, հրետանի) կազմած ջոկատի մարտական գործունեությունների ցուցադրական վարժությունը: Այդ վարժությունից նորեկ կարմիր բանակայիններին մեջ պետք ե մնա ընդհանուր տպավորություն մարտի մասին և այն աշխատանքի մասին, վոր վիճակվելու յ նրանց մարտադաշտում:

Այդպիսի վարժություն կազմակերպելու համար վերցնում են հին կարմիր բանակայիններին (գնդային դպրոցի ուսանողներին), և սովորաբար այդ վարժությունն անցնում են միանգամից ամբողջ զորամասի (գումարտակի, գնդի) համար:

Նորեկ կարմիր բանակայիններին դուրս են բերում և դասավորում այնպիսի տեղերում, վորտեղից նորեկները կկարողանան լավ դիտել վարժության ընթացքը: Նրանց հետ պարապմունքները տեղի յեն ունենում դասակ առ դասակ՝ դասակների հրամատարների ղեկավարությամբ:

Բացատրելով մարտիկներին ներկա վարժության նպատակը, ղեկավարն ամփոփ և պարզ ցույց ե տա-

լիս պարագան և վարժության մեջ գործող զորամասերի ինդիւրները: Դրանից հետո այն ամենը, ինչ դիտում են, քայլ առ քայլ բացատրվում ե զրույցների միջոցով:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹԱՅՈՒՄԸ ՏԵՂԱՆԲԻՆ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Զորքերի մարտական գործողություններում տեղանքից շատ բան ե կախված: Նա կամ ոգնում ե մեր գործողություններին, կամ դժվարացնում այն: Որինակ՝ անտառներով, թփերով, ձորակներով ծածկված տեղանքը ոգնում ե մեզ քաղտնի մոտենալ հակառակորդին և հանկուրձակի հարձակվել նրա վրա: Իսկ բաց տեղերում հակառակորդը հեշտությամբ մեզ կհայտաբերի, մենք մեծ կորուստներ կկրենք նրա կըրակից, այստեղից ել ուրեմն մեր առաջխաղացումը կը դանդաղի:

Շնորհիվ այդ ազդեցության, զորքերը միշտ ել պետք ե հարմարվեն տեղանքին: Ամենափոքրիկ խմբակի, դիտքի, պարեկի և մինչև իսկ առանձին մարտիկի գործողությունները մեծ չափով կախված են տեղանքից: Ուստի յուրաքանչյուր մարտիկ պետք ե վարժվի տեղանքը հասկանալ ուղղմական տեսակետից, պետք ե կարողանա ոգտագրեծել տեղանքը յուրաքանչյուր պարագայում:

Ցուցադրական վարժությունից հետո, յերբ նորեկ կարմիր բանակայինները ծանոթացան զորքերի մարտական գործողություններին, հարկավոր ե նրանց ծանոթացնել տեղանքին, վորպեսզի նրանք ընդհանուր հասկացողություն ունենան ուղղմական գործում

տեղանքի ունեցած նշանակութեան մասին: Այդ կողմի հետագա պարապմունքներին և կատարյալ կարմիր բանակայիններին ավելի գիտակցորեն վերաբերվելու դեպքի տեղանքի ոգտագործումը:

Տեղանքի հատկութիւններին ծանոթացման պարապմունքի համար վաղորոք նշվում է այնպիսի տեղամաս, վորտեղ կարելի լինի ցույց տալ ամենաբազմազան տեղական առարկաներ և տեղանքի ծախքեր:

Դիտելով տեղանքը բարձունքներից և շրջագոյութիւններով, պարապմունքների ղեկավարը (ջոկի հրամատարը) բացատրում է մարտիկներին տեղական առարկաների անունները, ինչպես ընդունված է անվանել նրանց ռազմական լեզվով: Դրա հետ միասին հարկավոր է բացատրել, վոր ռազմական գործում պետք է միշտ և արագ իրար հասկանալ, այսինքն՝ պետք է ունենալ ընդհանուր լեզու: Յեթե միևնույն առարկան տարբեր անուններով անվանենք, զրանով կդժվարանան մեր գործողութիւնները, խառնաշփոթութիւն կառաջանա, վորը մարտում մեծ կորուստների պատճառ կդառնա: Այդ նույն բանը պետք է հաստատել որինակներով:

Միանգամայն հասկանալի չէ, վոր միանգամից չի կարելի նպատակ դնել՝ մարտիկներին ռազմական լեզուն սովորեցնել հենց առաջին պարապմունքներում: Դրա համար կպահանջվի մի վորոշ ժամանակ: Հարկավոր է միայն չմոռանալ այդ ռազմական լեզվի մասին և ըլլոր պարապմունքներում աշխատել մարտիկներից պատասխանը ստանալ ռազմական լեզվով:

Հայտնելով տեղական առարկաների անունները, պետք է հենց տեղն ու տեղը բացատրել նրանց նշանակութիւնը ռազմական գործում, իսկ ինչ հնարավոր


է, հենց գործով ցույց տալ այդ նշանակութիւնը: Որինակներին համար շատ բան կարելի չէ ոգտագործել այն ամենից, ինչ մարտիկները տեսել են նախընթաց ցուցադրական վարժութիւններում:

Տեղավորվելով սովորողների հետ միասին մի բարձր վայրում, ջոկի հրամատարը ցույց է տալիս տեղանքի այս կամ այն մասը, հասկացողութիւնն է տալիս, թե ինչ է «բաց տեղանքը», «փակ», «կտրատված», «հովտային», «բլրավետ» և այլ տեղանքները: Համեմատութիւնների և ոժանդակ հարցերի միջոցով մարտիկները պետք է յուրացնեն, վոր բաց տեղանքը կարելի չէ հեշտութեամբ դիտել և լավ գնդակոծել նրա վրա յեղած նշանները: Փակ տեղանքը (շենքերով, թփերով, անտառակներով ծածկված տեղանքը) ծածկում է զորքերին հակառակորդի դիտողութիւնից ու գնդակներից: Կտրատված տեղանքը (վորը ծածկված է գետերով, լճերով, ճահիճներով, յեղեղնուտներով, ձորակներով և այլն) դժվարացնում է զորքերի առաջխաղացումը: Բարձունքներից կարելի չէ ավելի հեռուն տեսնել, քան թե ցածր վայրերից և այլն:

Այնուհետև զործնապես ցույց են տալիս, վոր տեղական առարկաներից վումանք ծածկում են միայն հակառակորդի աչքից, իսկ վումանք ել նաև՝ նրա գնդակներից: Հետո հասկացողութիւն են տալիս ծածկված տեղերի նշանակութեան մասին՝ դեպքի հակառակորդը մեր կատարած առաջխաղացման միջոցին, ինչպես նաև այն ժամանակ, յերբ հակառակորդն է շարժվում դեպի մեզ (այսինքն բացատրվում են մատուցյնները): Այդ կարելի չէ կատարել զործնապես փոքրիկ խնդիրների լուծման և վերլուծման ձևով:

Հենց այստեղ պետք է հրացանաձիգներին ցույց

տալ, վոր մինչև իսկ հարթ, բաց դաշտում կան տեղանքի շատ ծալքեր, վորոնք հմտությամբ ոգտա-
գործվելու դեպքում կարող են ծածկել հրացանաձիգ-
ներին նրանց տեղում դասավորված կամ տեղափո-
խությունների միջոցին:



ԾԱՏԿԱԾ ՄԱՏՈՒՅՑՆԵՐՈՎ ԿՏՐԱԾ ՏԵՂԱՆՔԻ ՏԵՍՔԸ

Իրանից հետո զրվում ե տեղանքի գնահատակա-
նը հակառակորդին դիտելու և հակառակորդի կողմից
մեզ դիտելու տեսակետից, այսինքն՝ այն կետերի գը-
նահատականը վորտեղից հնարավոր ե կատարել այս
կամ այն տեղամասի դիտողությունը:

Այնուհետև մշակվում ե տեղանքի գնահատա-
կանը քիմիական հարձակման կամ պաշտպանության
տեսակետից: Ամփոփ զրուցյով տրվում ե հասկացո-
ղություն այն մասին, վոր զաղերն ամենից շատ կու-
տակվում են ցածր տեղերում (ձորակներում, ձորե-
րում և այլն): Գաղային զրոնի համար ամենից
հարմար վայրն այն ե, վորը փոքրիկ թեքում ունի
դեպի հակառակորդի կողմը: Գաղային ամպի ճանա-

պարհին յեղած բարձունքները, անտառները և այլն,
զգվարացնում են նրա տարածումը. անտառում զաղերն
ավելի շատ են պահվում, կանգ առնում, քան թե բաց
դաշտում և այլն:



ԼԱՎ ՏԵՍԱԾԻՐՈՎ ՈՒ ԳՆԴԱԿՈՐՈՎ ՏԵՂԱՆՔ

Հետո պետք ե մասնանշել, վոր անձանոթ տե-
ղանքում մարտիկները պետք ե կարողանան ճանաչել
իրենց զորամասի, հակառակորդի, հարևանների ե այլ
զորքերի դասավորության տեղը: Այդ կարելի յե անել
յերկրի կողմերը վորոշելով: Հենց այստեղ ցույց են
տալիս հյուսիսային, հարավային, արևելյան ե արև-
մույան ուղղությունները ամենապարզ միջոցներով
(արևով, յեկեղեցիներով, գերեզմանատներով): Հետո
կարճ պատվերների միջոցով կարմիր բանակայիննե-
րը վորոշում են, որինակ՝ վոր իրենք գտնվում են
գյուղի հյուսիսային ծայրամասում. նրանցից դեպի
արևմուտք գտնվում ե անտառը, դեպի հյուսիս-արև-
մուտք՝ դասավորված ե անտառի ետևում:



3. ՏԵՂԱՆՔԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Տեղանքի ոգտագործման պարապմունքներն սկսվում են քողարկման ցուցադրական վարժությունից, վորը կազմակերպում է անձամբ վաշտի հրամատարը: Այդ վարժությունում դաշտում գործնապես ցույց են տալիս, թե՛ ինչ նշանակություն ունեն գաղտնապահություն համար գույները, (հագուստեղենի պաշտպանական գույնի նշանակությունը). տեղանքի ֆոնը, սովերը, մարտիկի դրությունը, խալաթի գործածությունը, գորգ-քողարկը, կորդակ-քողարկը, կեղծ կոճղեր, հրացանաձգի քողարկումը ձեռքի տակ յեղած նյութերով (ճյուղեր, ծղոտ, ճիւմ և այլն). ապա քողարկման նշանները (այսինքն՝ տյնպիսի նշաններ, վորոնցով կարելի չե հայտարերել մեր կամ հակառակորդի դրությունը): Քողարկման հարցերի հետագա մշակումը սերտ կերպով կապված կլինի բոլոր մարտական պարապմունքների հետ: Յուրաքանչյուր վարժությունում ջոկի հրամատարը պետք է պահանջի կարմիր բանակայիններից, ճիշտ հարմարվել տեղանքին, քողարկման համար ոգտագործել ձեռքի տակ յեղած նյութերը և այլն:

Անհատ մարտիկը պետք է պարզ և հաստատապես յուրացնի, վոր տեղանքը կարելի չե ոգտագործել նախ՝ ծածկվելու համար հակառակորդի աչքից ու գնդակներից թե՛ տեղում դասավորված և թե՛ շարժման ժամանակ, և յերկրորդ՝ հակառակորդին հրազենով հարվածելու հարմարություն համար:

Տեղանքի ոգտագործման ուսումնասիրությունը, վորպես ծածկաբան հակառակորդի դիտողությունից ու գնդակներից՝ տեղում դասավորված ժամանակ:

Այստեղ հարկավոր է մշակել հետևյալ հարցերը-

ա) Այն կետերի գնահատականը, վորոնցից հակառակորդը հնարավորություն ունի դիտելու մեզ. բ) հրացանաձգի կողմից ծածկարան ընտրելը հակառակորդի դիտողությունից և գնդակներից. գ) հրացանաձգի իր դրությունը՝ նայած ոգտագործվող տեղական առարկային (քողարկող դրություն, սովերային քողարկման վարարկները). դ) մարտիկի քողարկման ամենապարզ ձեռքը ձեռքի տակ յեղած նյութերով (ծառի ճյուղեր, ծղոտ, ճիւմ և այլն):

Պարապմունքները տարվում են վորքերի խնդիրների լուծման ու վերլուծման ձեռք, անցնելով մի տեղից՝ մյուսը:

Յուրաքանչյուր այդպիսի խնդիր լուծվում է մարտիկների կողմից գործողություններ: Տալիս են որինակ՝ մի խնդիր կարմիր բանակային իվանովին: Իվանովը, կրկնելով խնդիրը, սկսում է լուծել այն: Մնացած բոլոր մարտիկները դիտում են: Այնուհետև ջոկի հրամատարը հարցնում է՝ «Ճիշտ լուծեց արդյոք խնդիրն ընկ. Իվանովը»: Բացասական պատասխան ստանալով, հրամայում է ուրիշներին ցույց տալ, թե ինչպես նրանք կանեյին: Նորից վերլուծում է կատարում: Յեթե սխալները շարունակվում են, ջոկի հրամատարն ուղղում է անձամբ, ցույց տալով ճիշտ ձևը:

Հակառակորդի գնդակներից պաշտպանվելու վերաբերյալ խնդիրներ լուծելիս պետք է ուշադրությամբ առնել գնդակի ծակել-անցնելու ուժը (յեթե այդ արդեն անցել են հրաձգային պարապմունքներում, հարկավոր է կրկնել և խորացնել): Բավական է, յեթե կարմիր բանակայինները հիշեն մի շարք պարզ կանոններ. որինակ՝ գնդակը չի ծակում-անցնում 1) այնպիսի ծառը, վոր չի կարելի յերկու ձեռքով գրկել. 2)

1^{1/2} քայլ հաստությամբ ավազն ու հողը. 3) 2—2^{1/2} քայլ հաստությամբ փափկացրած հողը. 4) յերկու աղյուսի հաստությամբ աղյուսե պատը. 5) 7—8 քայլ յայնությամբ խոտի դեղը. 6) մոտ մի քայլ հաստությամբ ճիւղը:

Հենց այստեղ եւ պետք է քննել այս կամ այն ծածկարարանի լավ ու վատ կողմերը: Որինակ՝ յերբ գնդակներն ընկնում են քարերի մեջ, քարերից կը տորտանքներ են թռչում, վորոնցով հենց կարելի չե վիրավորվել:

4. ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԱՉԲԻՑ ՈՒ ԳՆԴԱԿՆԵՐԻՑ ԾԱԾԿԵԼԸ ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Անցնելով այս պարապմունքին, հարկավոր է ամենից առաջ ցույց տալ և բացատրել մարտիկներին, վոր ծածկված տեղափոխությունների համար պահանջվում է.— նախ՝ ընտրել ծածկված ճանապարհ (մատույց), յերկրորդ՝ իր մարմինն տալ այդ ճանապարհով շարժվելու համար հարմար դրություն և յերրորդ՝ ճիշտ քողարկել իր շարժումը: Այստեղ հարկավոր է պարզել նաև տեղափոխությունների միջոցների տարբերությունը՝ նայած հակառակորդի դրության ու գործողություններին: Այլ բան և տեղափոխվել հակառակորդից հեռու, յերբ նրա համար զգալի է մեզ դիտելը, և այլ բան և հակառակորդից մոտիկ տեղափոխվել: Մի տեղ տեղանքի ծալքը կծածկի մարտիկի շարժումը նրա ամբողջ հասակով մեկ, մի այլ տեղ՝ միայն մինչև կուրծքը. այս դեպքում հարկավոր կլինի շարժվել կռացած դրությամբ: Յերբ տեղանքի ծալքը ծածկում է շարժվող հրացանաձգին մինչև գոտկատեղը, հարկավոր է շարժվել չորեքթաթ: Յերբ հագիվ նշմարելի բարձունքը, անհարթությունը կամ

խոտը ծածկում է միայն վորոքերի ցածը մասը, այն ժամանակ շարժումը կարելի չե ծածկել միայն սողալով: Վերջապես՝ յերբ տեղանքն ամենևին չի ծածկում:

հակառակորդ



ՄԱՐՏԻԿԸ ԾԱԾԿԱԾ Ե ԿԻՍՈՎ ԶԱՓ ՇԱՐԺՎՈՒՄ Ե ԿՈՒՑԱԾ

մարտիկին, այսինքն՝ յերբ մարտիկը պառկած է զբլուխը գետնին սեղմած տեսում է հակառակորդի դասավորությունը, տեղափոխությունը կատարում է վազելադրով: Այդ դեպքում յերկար վազել չի կարելի, վորովհետև հակառակորդը կարող է նշան բռնել և հարվածել:

Վազելադրը պետք է շարունակվի այնքան ժամանակ, վորքան հակառակորդի գնդացրորդին կամ հրացանաձգին ժամանակ է պետք պատրասվելու և գնդակն արձակելու համար, այսինքն՝ միջին թվով 5—6 վայրկյան: Այդքան ժամանակում վազելադր կատարող մարտիկը կարող է անցնել 10—15 մետր: Այստեղից եւ վազելադրի ժամանակ ծածկարանները պետք է նշել տեղանքի ծալքերում (տեղահան առարկաներում) այդ տարածությունների վրա, վոր

պիստոլի վաղելով մի ծածկարանից դեպի մյուսը, ժամանակ չտրվի հակառակորդին նշանոցային կրակ բա-



ՅԵՐԲ ԲԱՐՁՈՒՆՔԸ ՀԱՁԻՎ ՆՇՄԱՐԵԼԻ ՅԵ, ԽԱՐԺԵԼ ԿԱՐԵԼԻ ՅԵ
ՍԻԱՅՆ ՍՈՂԱԼՈՎ

նալու: Վարժություններով և փորձառությամբ այդպիսի ծածկարաններ կարելի չե գտնել մինչև իսկ ամենահաբթ տեղանքում:

Դրա հետ միաժամանակ հասկացողություն են տալիս շարժումները մեռյալ տարածություններով ծածկելու համար, ոգտվելով այն գիտելիքներով, վոր ձեռք են բերել այդ մասին հրաձգային պատրաստության ժամերին: Ընդհանուր ցուցումներ տալուց և մարտիկներին վերոհիշյալին ծանոթացնելուց հետո անհրաժեշտ ե անցնել տեղանքում ծածկված շարժվելու գործնական վարժություններին. միաժամանակ պետք ե գործադրել մարտիկի քողարկման ձևերը ձեռքի տակ յեղած միջոցներով (ծառի ճյուղ, ծղոտ և այլն):

Այդ վարժությունները կարելի չե կատարել փոկ-բիկ խնդիրները լուծման ձևով:

Կարմիր բանակայիններից մեկի սխալները պետք ե ուղղեն մյուսները, սխալներն ուղղվում են նաև ցույց տալու ոգնությամբ: Բոլոր դեպքերում այն ամենը, ինչ չեն նկատել մարտիկները, պետք ե ուղղի ինքը ջոկի հրամատարը, ըստ հնարավորության անձամբ ցույց տալով ասածը:

Վարժության ժամանակ անհրաժեշտ ե ձգտել, վորպեսզի զարգանա մարտիկների սեփական միտքը (գիտակցականությունը): Հասնելով մի ծածկարանի, մարտիկը պետք ե նշի հաջորդ ծածկարանը, և լավ մտածի, թե ինչ միջոցով պետք ե շարժվի դեպի այդ ծածկարանը (շարժվելու յե արդյոք վաղևազքով, սողալով կամ չորեքթաթ և այլն):

Նման բոլոր պարապմունքների համար հարկավոր ե ջոկել ամենից հարմար այնպիսի տեղամաս, վոր խնդիրը հնարավորություն տա գործադրելու տեղափոխման վող թե մեկ այլ մի քանի միջոցներ: Ահա հենց այստեղ ել թող յուրաքանչյուր մարտիկ պարզի թե վոր ճանապարհը (ծածկարան, մատույցներ և այլն) և շարժման վոր միջոցը (սողալ, վաղևազք) կլինեն լավագույնը:



ԻՆՁՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀՐԱՑԱՆԸ ԲՈՒՆԵԼ ՍՈՂԱԼԻՍ

Նույն այդ պարապմունքներում պետք ե ցույց տալ և վարժեցնել մարտիկներին այս կամ այն միջոցով տեղափոխվելու տեխնիկային, այսինքն՝ թե ինչպես պետք ե զնալ կռացած, չորեքթաթ, սողալով, ինչպես կատարել վաղևազքը, ինչպես այդ բոլոր դեպքերում բռնել հրացանը, հանդերձանքը:

Վաղևազքի վարժեցնելիս հարկավոր ե ուշադրություն դարձնել վաղևազքից առաջ արագ վտար-

ցատկելու և վազեազքից հետո արագ գետին ընկնելու վրա: Վոտքի ցատկելիս մարտիկը պետք է արագ վեր կենա առջև ձգված ձեռքերի վրա, և հենվելով մի վոտքի վրա մյուսն առաջ դնի և ցատկի ու վազի վորքան կարելի յն շատ կռացած (վորպեսզի վորքը նշան ներկայացնի հակառակորդի համար): Գետին ընկնելիս մարտիկը պետք է վայր ընկնի ձախ վոտքի ու ձեռքի վրա աստիճանաբար (այսինքն սկզբում՝ ձախ ծնկան, այնուհետև՝ ձախ ձեռքի արմունկի վրա և ապա պառկի): Բայց այդպիսի հաջորդականությունը կարող է յերևալ միայն այն ժամանակ, յերբ վայր ընկնելը ցույց են տալիս առանձին նվազներով: Իսկ իրոք այդ պետք է կատարվի շատ արագ, մի ակընթարթում, վորի համար հարկավոր է շարունակ վարժվել:



Ե՛Ն ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՇՐԱՅԱՆԸ
ԲՈՆԵԼ ՍՈՂԱԼԻՍ

կառակորդի մի քանի տեղերում դասավորված լինելու ժամանակ:

5. ՏԵՂԱՆԲԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԿՐԱԿ ՄՂԵԼՈՒ ԶԱՄԱՐ

Սկզբում՝ հարկավոր է կարմիր բանակայիններին հասկացողություն տալ, թե ինչ է լավ գնդակո-

Առաջ շարվելու խնդիրներ պետք է տալ ուղիղ զիմաց գտնվող հակառակորդի վերաբերյալ, ինչպես և մի վորեն կողմում գտնվելիս (թեպախնշարժում), և վերջապես՝ հա-

ծը (առջևում յեղած տեղանքի լավ տեսածիւր, մեռյալ տարածությունների բացակայություն և այլն): Այնուհետև ցույց են տալիս, թե ինչ տարբերություն կա, յերբ մարտիկը տեղավորվում է կրակ մղելու համար պաշտպանության ժամանակ, և յերբ նա տեղավորվում է հարձակման ժամանակ:

Պաշտպանության ժամանակ հրաձգության համար հրաձանաձիգը պետք է գրավի այնպիսի տեղ, վորից ամենից լայն գնդակոծ և տեսածիւր կա դեպի առջևում գտնվող տեղանքը: Իսկ հարձակման ժամանակ հրաձգության համար կանգառումների միջոցին բավական է գրավել այնպիսի մի կետ, վորտեղից կարելի լինի տեսնել գնդակոծի յենթակա նշանը: Դրա հետ միասին մարտիկները պետք է յուրացնեն, վոր հրաձգության համար հարմար վայր ընտրելու հետ միասին, չպետք է մոռացության տալ հակառակորդի աչքից իրեն ծածկելու հանգամանքը: Իհարկե, կրակ վարելու հարմարությունը միշտ ել պետք է զերակշռող լինի ծածկարանի պայմաններից: Այդ մասին յերբեք չպետք է մոռանա պարապմունքների ղեկավարը, այդ պետք է հաստատապես մտցնի յուրաքանչյուր մարտիկի զիտակցության մեջ: Յերբեմն հարկ է լինում միանգամայն հրաժարվել ծածկարանից, և յերբ առանց ծածկարանի գնդակոծն անհամեմատ աչքի լավ է: Այդպիսի դեպքերում հրացանաձիգը պետք է ձգտի ավելի լավ արհեստական քողարկում ստեղծել ձեռքի տակ յեղած նյութերով (գլխի քողարկում, իրանի և այլն):

Որինակ՝ պաշտպանության ժամանակ լավ գնդակոծ ունենալու համար հաճախ հարկ է լինում տեղավորվել բարձունքների այն լանջերում, վոր դարձելով հենարկ հակառակորդի:

Այդպիսի գեղարվեստական մարտիկին ոգնության են գալիս թիւն (փոքրիկ խրամատ փորելու համար) և արհեստական քողարկման ամենապարզ միջոցները (ճիւղ, ծառի ճյուղեր, ծղոտ և այլն)։

Հակառակորդի կրակի տակ մարտիկների բարձրացրած գլխով պառկելը, աշխնքն՝ հրաձգային դրությամբ պառկելն այն ժամանակ, յերբ չեն կրակում, վոչ այլ ինչ և յեթե վոչ կամալոր կերպով իրենից գլխաջափ թիրախ ներկայացնել և, ընդհակառակն, նման դրությունից բացած հրաձգությունը, յերբ չի յերևում նշանը, նշանակում և ոգում կրակել և իզուր փչացնել փամփուշտներն ու ժամանակը։

Սկզբում ջոկի հրամատարն այդ բոլոր հարցերը հիշատակում և ամփոփ դրույցում. իսկ այնուհետև պարապմունքներ և ունենում փոքրիկ խնդիրներ լուծելու ձևով, վորոնցից յուրաքանչյուրը վերլուծում և անմիջապես։

Այդ պարապմունքներում ուշադրություն են դարձնում հրաձգության հարմարանքներին և հենարանների ոգտագործման վրա։ Հենց այդտեղ ցույց են տալիս թիւից հենարան պատրաստելը և գործնապես մշակում են անհատ մարտիկի ինքնախրամատման հարցերը։

Նման խնդիրներ լուծելիս ցանկալի յե, վոր հրացանաձիգը հրաձգության համար տեղ փնտրելիս վորոշ տեղափոխություններ կատարի, աշխնք՝ հրաձգության համար տեղի ընտրությունը կատարի այնպես, ինչպես այդ լինում և հարձակման ժամանակ։

6. ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Մարտիկը պետք և կարողանա կողմնորոշվել անձանոթ տեղանքում, աշխնքն պետք և կարողանա վո-

րոշել հյուսիսի, հարավի, արևելքի և արևմուտքի ուղղությունը։ Այդ չափազանց մեծ նշանակություն ունի մարտական կյանքում։ Մարտիկները պետք և յուրացնեն, վոր առանց դրան անկարելի յե աշխատել մարտադաշտում և մանավանդ հետախուզությունում։

Կողմնորոշվելու հմտությունը ձեռք և բերվում մշտական վարժութ, ամբ։ Կողմնորոշվելու ուսուցումը պետք և տարվի բոլոր պարապմունքներում և կարմիր բանակայինի ամբողջ ծառայության ընթացքում։


Անհատ մարտիկը պետք և կարողանա կողմնորոշվել կողմնացույցով, արևով, աստղերով և այլ տեղանկան առարկաներով։

ԱՇԽԱՏԻԻ ԿՈՂՄՆԵՐ ԵՐԵՎՈՎ ՎՈՐՈՇԵԼՔ. առավոտյան ժամի 3-ին անկախ տարվա յեղանակից արևը գտնվում և հյուսիս-արևելքում, ժամի 6-ին՝ արևելքում, ժամի 9-ին՝ հարավ-արևելքում, ժամի 12-ին՝ (կեսուրին) հարավում, ժամի 15-ին՝ հարավ-արևմուտքում, ժամի 18-ին՝ արևմուտքում և 21-ին՝ հյուսիս-արևմուտքում։ Ասել թե արևը միշտ ծագում և ճիշտ արևելքից և մայր և մտնում ճիշտ արևմուտքում, կարելի յե միայն մոտավորապես։ Նա ծագում և արևելքից միայն այն ժամանակ, յերբ արևածագը լինում և ժամի 6 ին։

ԼՈՒՍԻՑՈՎ կարելի յե աշխարհի կողմերը վորոշել միայն լուսնի լրման ժամանակ։ Լրման ժամանակ լուսինը գտնվում և՛ առավոտյան ժամի 6-ին արևմուտքում, ժամի 18-ին (յերեկոյան ժամի 6-ին) արևելքում։

Կողմնորոշումն աստղերով. պետք և գտնել յերկնքում Բեռալյին Աստղը, վորը միշտ ել գտնվում և հյուսիսում։ Այդ աստղը գտնելու համար, հարկավոր և սկզբում գտնել խոշոր աստղերի մի խմբակ, վոր

դասավորված և թավայի ձևով և կոչվում և «Մեծ Արջ» այդ խմբակը յերկնքում հեշտությամբ կարելի չե գտնել: Մեծ Արջի ծայրի յերկու աստղերի միջից յեթե մտքով գիծ անցկացնենք այդ գիծը դեմ կառնի Բևեռային աստղին:



ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆ ԱՍՏՂԵՐՈՎ

Բևեռային Աստղը գտնվում և «Փոքր Արջ» համաստեղության պոչում, ուստի յերր յերկնքը պարզ և, Բևեռային Աստղը կարելի չե գտնել ուղղակի Փոքր Արջի միջոցով, վորը վատ յեղանակին ավելի դժվար և գտնել:

Պրավորավ յեկեղեցին այնպես և կառուցված, վոր նրա սեղանը (բեմը) միշտ գտնվում և արևելյան կողմում: Կաթոլիկները յեկեղեցին, ընդհակառակն, դեպի

արևմուտք և նայում, իսկ մանանդական մեջիդները՝ դեպի հարավ:

Կան նաև ուրիշ նշաններ, բայց նրանց ամեն անգամ վստահել չի կարելի և նրանցից ոգավելիս մի միջոցը պետք և ստուգել մի այլ միջոցով: Որինակ՝ արևը տաքություն և լույս և տալիս հարավային կողմից, ուստի առանձին կանգնած ծառի ճյուղերն ու տերևները զարգանում և տարածվում են այդ կողմում. մասուռը, վորը սիրում և սովոր և խոնավություն, ծառերի բներն ու քարերն ավելի շատ պատում և հյուսիսային կողմից (վատ յեղանակի կողմից). ծառերի կտրած բները վրա շերտերն ավելի հաստ են հարավային կողմից:

Կողմնացույցն ամենից վստահելի միջոցն և կողմնացույցի սլաքը, վոր կողմն և դարձնելու լինենք, մի ծայրով կկանգնի դեպի հյուսիս, և մյուսով՝ դեպի հարավ:

Մի քանի կողմնացույցներում տուրի հատակի շրջանակի վրա աստիճանական բաժանումներ են արված, վորոշելու համար անկյունները:

Կողմնորոշման պարապմունքները տանում են թե ցերեկով և թե գիշերով: Յուրաքանչյուր միջոց ցույց և տրվում գործնապես:

Այս կամ այն միջոցը ցույց տալուց հետո, հարկավոր և այդ միջոցն ամրացնել մարտիկների հիշողության մեջ խնդիրների լուծման միջոցով. խնդիրները սկզբում լինում են հեշտ, իսկ հետո ավելի դժվար:

ԽՆԴԻՐՆԵՐԻ ՆՍՈՒՇՆԵՐ

1) Արևով վորոշեցեք արևելյան ուղղությունը, նկատի ունենալով, վոր ներկայումս ժամի 12-ն և... ժամի 6-ն և... ժամի 18-ն և...

2) Վորոշեք յերկրի կողմերի ուղղությունը յե-
լեղեցիով... ծառերով... կոճղով...

3) Վորոշեցեք ուղղությունը կողմնացույցով և
ցույց ավեք հարավը... արեելքը... հյուսիս-արևմուտ-
քը...

4) Դուք գտնվում եք այս գյուղում. կողմնա-
ցույց չունեք. յիդանակը վատ է. արեգակը չի յերե-
վում: Ինչպե՞ս կվորոշեք դուք ուղղությունը դեպի հա-
րավ և այլն:

5) Ինչպիսի՞ դրություն ենք մենք գրավում այս
գյուղի նկատմամբ:

6) Ինչ ուղղությամբ է ձգված այդ առուն:

Այնուհետև շարժման վարժություն են կատա-
րում կողմնացույցով և կողմնորոշիչներով:

Որինակ.

1) Պատվեր են տալիս թե այսինչ ուղղությամբ
(ցույց են տալիս վորև ե առարկայով) 200—300 քայլ
մեղանից հեռու ձորակում (վուր խնդիրը ստացած
վայրից չի յերևում) գտնվում է վաշտի հրամատա-
րը, վորին կարմիր բանակայինները պետք է հաս-
ցնեն տեղեկագիր, շարժվելով կողմնացույցի ոգնու-
թյամբ: Վաշտի հրամատարի գտնվելու տեղը կա-
րելի յե ներկայացնել կամ վաղորդք մի կարմիր բա-
նակային նշանակելով այնտեղ, կամ պայմանական
առարկա դնելով, ինչպես որինակ՝ քար, ճյուղ և այլն:

Շարժվելուց առաջ կողմնացույցը պետք է դնել
ձեռքի ավի վրա և պտտել կողմնացույցն այնպես,
վոր „С“ և „Ю“ տառերի միջև անցնող գիծը զուգա-
դեպի շարժման ուղղությանը՝ „С“ տառը դեպի շարժ-
ման կողմը, իսկ „Ю“ տառը դեպի իր կողմը: Ծած-
կորդում շարժման ուղղության հետ միասին նկատում
են վորև ե տեղական առարկա (առանձին ծառ, թուփ,

ուղեցույց և այլն): Մագնիսական սլաքն այդ ժամա-
նակ փոքր-ինչ կշեղվի „С“ տառից դեպի աջ կամ ձախ
կողմը: Մեղ կարևոր կլինի իմանալ, թե վորքան է նա
շեղվում: Յեթև կողմնացույցն ունի աստիճանական
բաժանումներ, այն ժամանակ նկատում են աստի-
ճանների քանակը սլաքի շեղվելուց: Իսկ յեթև աստի-
ճանական բաժանումներ չկան, „С“ տառից մինչև
սլաքի ծայրը յիդած տարածությունը չափում են
թղթի կտորով, լուցկիով և այլն:

Նկատելով սլաքի շեղումը մարտիկը շարժվում է
դեպի կողմնորոշման համար վերցրած տեղական առար-
կան: Հասնելով այդ առարկային և կրկին թղթի կտո-
րով կամ լուծկիով կողմնորոշելով կողմնացույցը, նշում
են հաջորդ առարկան և շարժվում են դեպի այդ ա-
ռարկան:

Ջոկի հրամատարը շարժվում է սովորող կար-
միր բանակայինների յետևից և հասնելով վաշտի հը-
րամատարի յենթադրվող տեղի գիծը, հրամայում
է բոլորին կանգ առնել: Այնուհետև մոտենում է այն
կետին վորտեղ գտնվում է վաշտի հրամատարին
պատկերացնող կարմիր բանակայինը կամ դրված է
պայմանական առարկան: Հավաքում է մարտիկներին
և բացատրում, թե ով ինչ սխալ է գործել:

Կողմնացույցով շարժվելը պետք է սովորեցնել
նաև գիշերով, վորի համար կան լուսատու կողմնա-
ցույցներ:

7. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Հակառակորդին, տեղանքը և այլն դիտելը
գործերում կատարվում է գործերի մարտական կյան-
քի ամբողջ ժամանակամիջոցում: Հանգստում ու

յերթում զիտողությունը կատարում են սլահապանող մասերը, հետախույզները, իսկ մարտում բացի դրանից զիտողությունը կատարում են բոլոր հրացանաձիգները:

Մեր ժամանակներում մարտադաշտը վտտ զիտողի համար դատարկ է յերևում: Զորքերը գործում են փոքրիկ խմբակներով, ցրված ամբողջ դաշտով մեկ և այն էլ ծածկված: Յեթե ուշադրության առնենք զորքերի վարժությունը քողարկման գործադրության մեջ (վրի վրա ներկայումս բոլոր բանակներում մեծ ուշադրություն են դարձնում), մեզ համար միանգամայն հասկանալի կլինի, թե վորքան կարևոր է զիտելու հմտությունը:

Այդ բոլորը բացատրվում է մարտիկներին նախանական ամփոփ զրույցով: Միանգամայն հասկանալի է, վոր չի կարելի զիտել սովորել 2-3 պարապմունքներում: Դրա համար նշանակված վարժություններում ուսումնասիրվում են միայն զիտելու վարարկները, ձևերը:

Անհատական ուսուցման ժամանակ հարկավոր է զիտողության նկատմամբ յուրացնել հետևյալը.

1. Կարողանալ ընտրել զիտողության համար հարմար վայր (կարողանալ կատարել այն կետերի գնահատումը, վորոնցից հնարավոր է այս կամ այն տեղամասի կամ հակառակորդի զիտողությունը և կարողանալ ծածկված դասավորվել այդ կետում):

2. Վարժվել նկատել ամենափոքրիկ փոփոխությունները տեղական առարկաների ու հակառակորդի զրության մեջ. գտնել մատնանշած նշանները և վորոշել մինչև այդ նշանները յեղած տարածությունը:

3. Կարողանալ ցույց տալ գտած նշանը, ամ-

փոփ վորոշել նրա գրությունը տեղական առարկաներով:

4. Հասկանալ այն նշանները, վորոնցով կարելի է դատել հակառակորդի զրության, գործողությունների և մտադրությունների մասին:

5. Կարողանալ զիտելու համար ոգտադործել յերկզիտակը:

6. Կարողանալ զիտողության համար ոգտվել լսողությունից. այսինքն՝ տարբերել ձայները (մանավանդ վիշերով), վորոշել, թե վորտեղից և ինչից են առաջանում այդ ձայները:

7. Վարժվել ողը զիտելու մեջ (հակառակորդի սավառնակների յերևալուն):

Սովորքների մշակումը պետք է տեղի ունենա հրացանաձիկ ամբողջ ծառայության ընթացքում, բոլոր պարապմունքներում: Մարտիկի մեջ պետք է մշակվի այնպիսի զիտողություն, վորպեսզի նրա զիտողությանը հանձնված տեղամասում նրա ուշադրությունից չվրիպի մինչև իսկ հավիվ նշմարելի այնպիսի փոխոխություն, վորը ցույց է տալիս հակառակորդի ներկայությունն ու գործողությունը: Դիտողության մշակումը պետք է սկսվի ամենապարզ վարժություններից. Որինակ՝ պարապմունքի շարժվելիս ջոկի հրամատարը տալիս է այսպիսի հանձնարարություն. մարտիկներից մեկը պետք է զեկուցի, յերբ կնկատի թուփ, ջրհոր, ուղեցույց. մյուսը պետք է նկատի առանձին կանգնած ծառը, առուն և այլն: Կամ ջոկի հրամանատարն առաջարկում է հիշել, թե ինչ հագուստ ունեյին ճանապարհին պատահած մարդիկ, կամ կանգնեցնելով ճանապարհին մարտիկներին հարցնում է, թե ինչ բան ամենից շատ գրավեց նրանց ուշադրությունը:

Այսպիսի վարժություններն առաջին հայացքից մեզ կարող ե մանր բան թվալ։ Մինչդեռ յեթե շարունակ դործագրելու լինենք այդ վարժությունները, նրանք սաստիկ զարգացնում եր մարտիկների դիտողությունը, առանց զբա համար հատուկ ժամանակ պահանջելու։

Դիտողության պարապմունքները, վորպես կանոն, տարվում են դաշտում։ Յանկալի յե այդ պարապմունքները կադմակերպել միաժամանակ ամբողջ դասակի կամ 2-3 ջոկի համար, վորովհետև մարդիկ կպահանջվեն ներկայացնելու համար հակառակորդին, իսկ այդ մի ջոկի համար դժվար կլինի։

Մոտավորապես, պարապմունքը կարելի յե կադմակերպել հետևյալ ձևով։


Ծրագիր. դիտելու համար հարմար տեղ ընտրելը. տեղանքի հետազոտման միջոցը (միջին կողքի շերտերի մոտավոր ու հեռավոր գոտիներ), դիտվող տեղամասի գնահատականը, դիտողություն, նշանների վորոնները և նրանց ցույց տալը։

Այդ պարապմունքի ղեկավարը պետք և վաղորոք ընտրի պարապմունքների համար տեղամասը, նշի դիտելու համար հարմար տեղը (դիտակետը), նշի դիտողության համար սահմանները և, ինչպես հարկն և, ուսումնասիրի ամբողջ տեղամասը, վորպեսզի ավելի նպատակահարմար ձևով դասավորի հակառակորդը ներկայացնող հրացանաձիգներին և նշի սրանց գործողությունները։

Հակառակորդը ներկայացնողի հետ կապ և հաստատվում պայնական նշաններով (ձեռքով, գլխարկով կամ դրոշակիկներով)։ Այդ նշանների միջոցով նրանք կկատարեն այս կամ այն գործողությունը

(կերևան, կտեղափոխվեն, սին փամփուշտներ կարձակեն և այլն)։

Գալով սովորողներին հետ ընտրած տեղամասը (բայց միանգամից դուրս չգալով ընտրած դիտակետի վրա), ղեկավարը հարցերի միջոցով տալիս և սովորողներին այն միտքը, թե Վինչ պայմանների պետք և բավարարի տեղը լավ դիտելու համար»։ Այնուհետև ցույց և տալիս այն տեղամասը, վոր հանձնված և դիտելու համար և առաջարկում և կարմիր բանակայիններին հերթով արտահայտվել, թե տվյալ դեպքում տեղանքի վրա վոր կետը կընտրեյին նրանք դիտակետի համար։ Լսելով պատասխանները և ցույց տալով սխալները, ղեկավարը տանում և կարմիր բանակայիններին այն տեղը, վորն ընտրել ևր նա, վորպես դիտակետ (յեթե մինչ այդ կարմիր բանակայինները չեյին մատնանշել այդ կետը)։ Դիտակետը հասնելով և նորից մատնանշելով տեղամասի սահ-



ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲԱԺԱՆՎԱԾ ՏԵՂԱՄԱՍ

ժանաները, ղեկավարը ցույց է տալիս, թե ինչպես պետք է դասավորվի ղիտողը, վորպեսզի ինքը լավ տեսնի՝ և միևնույն ժամանակ աննկատելի մնա հակառակորդի կողմից։ Այնուհետև բացատրվում է, թե ղեկավարը հարձարության համար ընդունված է ղիտելու նշանակված տեղամասը բաժանել յերեք շերտի միջին շերտը գտնվում է մեր առջևում ղեպի հակառակորդի կողմը և գլխավոր շերտն է հանդիսանում, այնուհետև աջ ու ձախ կողմերի յերկու շերտերը, վորոնք մասամբ ընդգրկում են հարևան տեղամասերը։ Դրա շնորհիվ ղիտողության տակ է գտնվում ամբողջ տեղամասը (մենք ենք վորոշ չափով ղիտողության տակ առնում հարևանների տեղամասից, և վերջիններս վերցնում են մեր տեղամասից)։

Այնուհետև ոժանդակիչ հարցերով կարմիր բանակայինները գալիս են այն մտքին, վոր ղիտողությունը հարկավոր է սկսել մոտավոր տեղերից (գոտիներից), աստիճանաբար անցնելով հեռավոր տեղերին (հետագոտվում են մոտավոր ու հեռավոր գոտիները)։ Դրանից հետո հարցերի միջոցով պարզվում է, վոր սովյալ տեղամասն ունի տեղանքի ծալքեր, վոր տարրեր են ղիտելու համար։ Կան այնպիսի տեղեր, վորոնց վրա հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել (մատուցյալների վորոշելը)։ Ապա առաջարկվում է կատարել ղիտողության համար նշանակված սովյալ տեղամասի զնահատումը։ Գնահատումը կատարելիս անհրաժեշտ է, վոր մարտիկները ցույց տալով այս կամ այն տեղական առարկան, սովորեն ճիշտ կողմնորոշվեն։ Ինչ աչքաթող է անում հրացանաձիգներին մեկը, լրացնում է ուղղում է մի ուրիշը։ Հարկավոր ղեպերիցում ոգնության են գալիս ղեկավարի բացատրությունները։ Այնուհետև ղեկա-

վարը հրամայում է բոլորին ղիտել և նկատածի մասին ղեկուցել, յերբ նա կհարցնի։ Հակառակորդ ներկայացնողին աստիճանաբար նշաններ է տալիս շարժվելու, կրակ բանալու, բարձրանալու և այլ գործողությունների համար։ Դրանից հետո կրկին ղիտում է հրացանաձիգներին և հրամայում հերթով ղեկուցել, թե ով ինչ է հայտարարել։

Դիտողության հետագա վարժությունները կազմակերպվելու յեն մոտավորապես նույն ձևով։

Քիչ նշմարելի է լավ քողարկված նշանները դժվար է գտնել հասարակ աչքով։ Այն ժամանակ ոգնության է գալիս յերկդիտակը, վորը տրված է լինում ղիտողին։ Պետք է ցույց տալ և վարժեցնել բոլոր հրացանաձիգներին յերկդիտակի ոգտագործումը։

Հետագա պարապմունքներում պետք է ցույց տալ ու բացատրել, թե ինչպես պետք է ղիտողության համար ոգտվել լսողությունից, այսինքն՝ կարողանալ տարրերել ձայները, կարողանալ վորոշել, թե վորտեղից են գալիս և ինչից են առաջանում այդ ձայները։

Մարտական պարագայում ամենից հաճախ կըրկընվող այն ձայները, վորոնցով կարելի յե գաղափար կազմել հակառակորդի գրության և գործողությունների մասին, պետք է լսել տալ բոլոր կարմիր բանակայիներին։ Այդ ամենը պետք է ցույց տալ գործնապես, ոգտվելով իր գորամասի կյանքից վերցրած դեպքերից։ Պետք է ցույց տալ, որինակ՝ գորսայունի կամ առանձին խմբակների տեղափոխությունների ժամանակ առաջացող ձայները (վորքի ձայն, ձիերի գրոփյուն, հանդերձանքի ձայն)։ հեծելազորի շարժումը, հրետանու, գումակ-

ների շարժման ձայնը և այլն: Վերջապես՝ տեղափոխությունների ժամանակ զանազան տեղանքով ու ուղեգնով անցնելու ձայնը (թփուտներ, չոր խոտ և այլն):

Շարժման մեջ գիտելու վարարկներն ուսումնասիրվում են պարեկների ու դետքերի ծառայությունը սովորելիս՝ յերթական պահպանության և հետախուզության մեջ:

8. ԿԱՊԻ ՎԱՐԱՐԿՆԵՐԸ

Անցնելով կապի վարարկների ուսումնասիրության, ջոկի հրամատարն սկզբում զրույցի միջոցով ընդհանուր հասկացողություն է տալիս կապի մասին և նրա նշանակության մասին զորքերի և առանձին մարտիկների գործողությունների մեջ: Պետք է առանձնապես շեշտել ներքին, կամ ինչպես ընդունված է անվանել «գաղափարական» կապի նշանակությունը:

Վերն և ներքին (կամ գաղափարական) կապը:

Նախ յուրաքանչյուր մարտիկ պետք է յուրացնի իր պարտքը բանվորա-գյուղացիական իշխանության հանդեպ, հասկանա աշխատանքի, վոր ում հետ ել մեր խորհրդային յերկիրը կռվելու լինի, այդ կլինի բանվոր դասակարգի ու գյուղացիության կռիվը ընդդեմ նրանց դասակարգային թշնամիների, այն է ընդդեմ կապիտալիստների ու կալվածատերերի: Այդ կռվում յուրաքանչյուր մարտիկին բաժին կընկնի ամենապատասխանատու և միևնույն ժամանակ պատվավոր խնդիրներ:

Յերկրորդ՝ բոլոր մարտիկները պարզ պետք է հասկանան իրենց խնդիրը, վոր յեթե պատահի, պե-

տի հետագա ցուցումները չստանա, յուրաքանչյուր մարտիկ կարողանա գործել ինքնուրույն՝ ընդհանուր մարտական հաջողության հասնելու համար:

Յերրորդ, մարտիկները մարտում միշտ պետք է ունեն, նեղ տեղից ազատեն, միմյանց:

Ներքին կապի նշանակությունը հաստատվում է տեղն ու տեղը՝ որինակներ բերելով սպիտակ գնեքալների դեմ մեր մղած կռվից, յերբ կարմիր բանակը՝ վատ զինված և վատ վարժեցրած, շնորհիվ ներքին կապի զրավում եր թշնամու ամենամատչելի զիւքերը:

Մարտիկների հետ հատուկ պարապմունքներ չեն տանում ներքին կապի բացատրության համար: Այդ բացատրությունը լինում է մարտիկի առորյա դաստիարակության, նրա քաղաքական գիտակցության զարգացման միջոցով և առանձին հարցերը բոլոր պարապմունքների մեջ մտցնելով: Որինակ՝ ինքնախրամատման ժամանակ ցույց է տրվում, վոր անհրաժեշտ է իրար ունել թիյով (յերբ քո խրամատը պատրաստ է, ունիլ ընկերովդ): շարժման ժամանակ ցույց է տրվում, վոր անհրաժեշտ է ունել միմյանց խոչընդոտները հաղթահարելու մեջ և այլն:

Արտաքին կապի հարցերի վերաբերյալ անհատ մարտիկը պետք է.

1. Կարողանա ամփոփ և խելացիորեն զեկուցել տեսածի մասին և ճիշտ (ռազմական լեզվով) անվանել առարկաները.

2. Գիտենալ զեկուցումներն ու հրամայանքները տեղ հասցնելու միջոցներն ու կանոնները.

3. Կարողանալ կազմել ամփոփ բանավոր ու գրավոր զեկուցագրեր:

4. Կարողանալ հաղորդել հեռախոսով, կապել (միացնել) հեռախոսաթիվը:

5. Գիտենալ, թե ինչպես են հաղորդում լուսավոր և հնչունական աղբյուրներով կետն ու դիմել:

Տեսածի մասին ամփոփ և խելացիորեն հաղորդելու կամ զեկուցելու հմտության սովորքները ձեռք են բերվում վոչ թե զրա համար հատուկ պարապմունքների միջոցով, այլ կարմիր բանակայինի ամբողջ ծառայություն, բոլոր պարապմունքների միջոցին: Այդ սովորքների մշակմանը նպաստում է նույնպես ստացած հրամայանքների կրկնելու մասին՝ ԲԳԿԲ Ներքին ծառայություն կանոնադրքի պահանջների մշտական կատարումը: Մարտիկը պետք է լավ վարժված լինի թե՛ բանավոր և թե՛ գրավոր զեկուցումների փոխանցման մեջ: Այդ պարապմունքների կազմակերպումն ինքնին շատ պարզ է: Այդ պարապմունքներն ոգտակար և համաձայնեցնել յերկու ջոկերի միջև, վորպեսզի զեկուցադրել կամ հրամայանքը ուղարկվի մի ջոկի հրամատարից՝ մյուսին: Այդպիսի դեպքում պարապմունքներից առաջ սովորող ջոկերի հրամատարները թղթի վրա կազմում են մի քանի զեկուցադրերի կամ հրամայանքների բովանդակություն (յուրաքանչյուրից 2 որինակ, վորպեսզի յուրաքանչյուրը հնարավորություն ունենա ստուգելու սովորողի բանավոր հաղորդածը: Սովորող կարմիր բանակայինը յուրաքանչյուր բանավոր զեկուցադրելու համար հրամայանք կրկնում է մեկնելիս և վերադառնալիս: Սովորողների խմբակին ուղղած հարցերի միջոցով պարզվում է, վոր այդ արվում է այն նպատակով, վոր ուղարկողը համոզված լինի, թե իր խոսքերը ճիշտ կհաղորդեն և չեն շփոթի: Զի կարելի

իհարկե, պահանջել, վոր հաղորդեն բառացի ճշտությամբ, պետք է հետևել, վոր չշփոթեն իմաստը (այսինքն՝ բովանդակությունը):

Ահուհետե կատարվում են զրավոր զեկուցադրերի փոխանցման վարժություններ: Հարցերի միջոցով պարզվում է՝ «ինչ պետք է անի զեկուցադիր տանողը, այն դեպքում, յերբ հակառակորդի ձեռքն ընկնելու վտանգ կա», «ինչ կանի նա, յեթե ճանապարհին վիրավորվի» և այլն:

Հետագայում, յերբ մարտիկները կյուրացնեն լրատարի ծառայությունը, պետք է անցնել զեկուցադրերի կազմելու ուսուցման: Սկզբում տեղի յեն ունենում բանավոր զեկուցադրեր կազմելու պարապմունքներ, Զոկի հրամատարը տալիս է մի փոքրիկ խնդիր:

Զեկուցադրել պետք է պատասխանի հետևյալ 5 հարցերին:

1. Հատկապես վորտեղ է նկատված հակառակորդը.
2. Վորտեղից է նա յեկել.
3. Հատկապես յերբ (ճիշտ ժամանակը).
4. Հակառակորդի ուժերը (ներա յերթական սյունի մեծությունը), ունի՞ արդյոք հրետանի, շարժվում է նա արդյոք, կա՞նգ և առել և այլն:

Գրավոր զեկուցադրեր կազմելու պարապմունքները տարվում են մոտավորապես նույն ձևով, ինչպես և բանավոր զեկուցադրեր կազմելիս, այսինքն՝ խնդիրներ լուծելու միջոցով: Սկզբում Զոկի հրամատարն ինքը պետք է տա զեկուցադրի մոտավոր ձևը: Ահուհետե այդ ձևը պետք է կազմեն իրենք կարմիր բանակայինները: Այդ ասպարիզում հատուկ պարապմունքներ տանելու հարկ չկա: Դրա համար կա-

րելի յե ոգտադործել յուրաքանչյուր անգամ դաշտ-
դուրս գալը, զեկուցագիր կազմելու պատվեր տալով
հրացանաձիգներից մեկն ու մեկին (հերթով):

Հետագա պարապմունքներում կարելի չե մար-
տիկներին ծանոթացնել հեռախոսին, և թե ինչպես
պետք է խոսել հեռախոսով: Հենց այդտեղ կարելի
չե շեշտել, թե վորքան կարևոր է կապի ընդհատումից
խուսափելու համար դեպի հեռախոսաթելերը խնամ-
քով վերաբերվելը, ինչպես նաև գործնապես ծանո-
թացնել կտրված հեռախոսաթելերի կապելուն (մի-
ացնելուն):

Ամենապարզ պայմանական նշաններով (նշա-
նարարություն ձեռքով, գլխարկով և այլն) կապի
վարարկները կուսումնասիրվեն բոլոր մարտավարա-
կան պարապմունքներում: Դրա համար առանձին պա-
րապմունքներ ունենալու հարկ չկա, միայն հարկա-
վոր է ցույց տալ կետերի ու գծիկների նշանարա-
րությունը՝ դրոշակներով, լապտերներով (գիշերով),
սուլիչով և այլն:

Բացի դրանից կարմիր բանակայիններին պետք
է ընդհանուր հասկացողություն տալ շների ծառա-
յություն մասին, իսկ վոր գլխավորն է, մարտիկները
պետք է ըմբռնեն, վոր ռազմական շանը հարկ չկա
ձեռք տալու, առանց կարիքի մոտ կանչելու, այդ
միայն կարող է փնտսել դործին. շունը կարող է
խորթանալ իր առաջնորդից: Տեսնելով, վոր շունը
զեկուցագրով կանգ է առել, հրացանաձիգը պարտա-
վոր է ձեռքով թափահարել դեպի այն կողմը, վոր-
տեղ գնտվում է ավագ պետը (նույն տեղն է սովոր-
աբար լինում շան առաջնորդը) և միևնույն ժամա-
նակ գոչել «դեպի պոստ»: Կապի ֆնացած միջոցների
մասին (հեռագիր, ռադիո, սավառնակներ և այլն) ամ-
փով հասկացողություն է տրվում զրույցի միջոցով:

9. ԴԻՏԱԿԱԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՅԵՎ ՅԵՐԹԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նախնական ամփոփ զրույցում ջոկի հրամա-
տարը հակացողություն է տալիս հետախուզության
նպատակների ու խնդիրների մասին: Հետախուզի
ծառայությունը պահանջում է աչալուրջ դիտողու-
թյուն, համարձակություն, համառություն և վճռակա-
նություն: Այստեղ ավելի քան վորեք մի այլ տեղ,
մարտիկը պետք է հայտարարի ինքնագործունեյու-
թյուն՝ դրած խնդիրը կատարելու ժամանակ: Տեղան-
քի ոգտադործման, դիտողության, կողմնորոշման, կա-
պի և այլ միջոցներ կկազմեն հետախուզության ամ-
բողջ ուսուցման բաղադրիչ մասը: Պարապմունքները
տարվում են շրջանաձև ճանապարհով, վորը կարող է
սկսվել զորանոցից (ճամբարից) և հասնել կրկին զորա-
նոցին կամ ճամբարին: Զոկի հրամատարը վաղորդ
ուսումնասիրում է այդ ճանապարհը, նշում է հակա-
ռակորդը պատկերացնողի դասավորության տեղերը
(յեթե այդ մասում է ծրագրի մեջ), վերլուծման հա-
մար կանգառումների կետերը և այլն:

Մոտավորապես ուսուցումը կարող է անցնել
այսպես:

Ուսուցման նպատակը. Ուսումնասիրել հետա-
խուզու թյունում գտնվող դիտակալները տեխնիկան,
տեղական առարկաները զննելու միջոցներն ու կապի
վարարկները:

Պարապմունքների կազմակերպումը. 1) Պա-
րապմունքների վայրն է շրջանաձև ընթացողին.
պարապմունքները սկսվում են պրավոսլավ գերեզմա-
նատնից:

2) Պարապմունքները բաժանվում են յերեք շերտերի. 1-ին շրջանը գերեզմանատնից մինչև ճանապարհի մոտ գտնվող ջրհորը, 2-րդը՝ ջրհորից մինչև... և այլն:

3) Վորպես գիտակալներ, յուրաքանչյուր շրջանի համար ջոկի կողմից նշանակվում են 2-3 հրացանաձիգ, մնացածները շարժվում են ղեկավարի հետ և վերլուծում են գիտակալների գործողությունները: Յուրաքանչյուր շրջանից հետո կանգառում և վերլուծում:

Ուսուցման ծավալը: Հետախուզության պատրաստվելը. գիտակալների շարժումը մի բնագծից դեպի մյուս բնագիծը (մի գիտակալից դեպի մյուս գիտակալը). տեղանքում և ճանապարհին գտնվող առանձին տեղական առարկաների հետազոտությունը. կապի միջոցները և այլն:

Ուսուցման քննացքը: Գալով յեկման կետը և մարտիկներին բացատրելով տվյալ պարապմունքի նպատակը, ջոկի հրամատարը հարցերի միջոցով ցույց է տալիս, թե ինչպես պետք է շարժվեն գիտակալները, վորպեսզի իրենք լավ տեսնեն և չնկատվեն հակառակորդի կողմից. ինչ պետք է անել, վորպեսզի հակառակորդը հանկարծակի չբռնի նրանց, ինչպես կապ պահել կորիզի հետ և այլն:

Այդ նախնական դրույքը պետք է հիմք տա պարապմունքների համար, վորովհետև բոլոր շոշափած հարցերի խորացումը կկատարվի գործնապես ուսուցման հետագա ընթացքում:

Դրանից հետո ջոկի հրամատարը ջոկում է, վորպես գիտակալ 2-3 հրացանաձիգ և նրանց մարտավարական խնդիր է տալիս (ամփոփ, բայց պարզ ցույց է տալիս: Թե վորտեղ և հակառակորդը, վորտեղ են

մեր զորքերը. հետախուզության խնդիրը, կորիզի շարժման կարգը), վորի յուրացումը ստուգվում է բոլոր կարմիր բանակայիններին ուղղած հարցերով: Այստեղ բացատրվում է նաև, վոր տվյալ պարապմունքներում կորիզը պետք է շարժվի գիտակալներից ավելի կարճ տարածություն վրա: Հարմարություն համար ջոկի հրամատարը ղեկավարում է ուսուցումը: Այնուհետև նա հրամայում է գիտակալներին անցնել շարժման, իսկ ինքը շարժվում է սովորողների մնացած խմբակի հետ, հրամայելով նկատել գիտակալների գործողությունների բոլոր թերությունները: Կանգառման համար նշված տեղում կատարում է բոլոր սովորողների հետ նրանց գործողությունների վերլուծումը, ուշադրություն դարձնելով հետևյալ հարցերի վրա. արդյոք բոլորն էյին լցրել հրացանները, ինչի համար է այդ անհրաժեշտ, քննարկվում են շարժման գաղափարախթյունը, գիտակետերի ընտրությունը, դեպի գիտակետերը մոտենալու միջոցները, տեղական առարկաների հետազոտման ճշտությունը և այլն:

Հետևյալ շրջանի համար, վորպես գիտակալներ, նշանակվում են նոր հրացանաձիգներ, և պարապմունքներն ընթանում են նույն կարգով:

Հաջորդ ուսուցումները հարկավոր է անցկացնել նույն ձևով նոր տեղանքում, մտցնելով նոր տեղական առարկաների գննություն, հակառակորդի գործողություններ, քիմիական հետախուզության ծառայության պարտականություններ և այլն:

Հանդիպելով հակառակորդին, գիտակալներն այդ մասին տեղեկացնում են պայմանական նշաններով ջոկի հրամատարին: Յերբ հանկարծ յերևում են հակառակորդի մեկական հետախույզներ, հարկավոր է ձգտել նրանց բռնել առանց գնդակ արձակելու,

սրբնթաց կերպով, առանց աղմուկի, նետվելով ավի-
նամարտի։ Յերբ ուժերն անհավասար են, դիտակալ-
ները պետք է խուսափեն ընդհարումից, մինչև կո-
տենա կորիզը և նրա հետ միասին կրճեն հակա-
ռակորդին։

Յերբմն ըստ պարագայի շահավետ և լինում,
թաքնվելով, բաց թողնել հակառակորդին իրենց մո-
տից և շարունակել իրենց շարժումը։ Հանդիպելով
վաղորդ նկատված հակառակորդին, դիտակալները
տեղեկացնելով այդ մասին ջոկի հրամատարին,
գրավում են լավ ծածկված դիտակետ, վորտեղ և շա-
րունակում են դիտել, մինչև ջոկի հրամատարի հրա-
մանը։ Հետապնդում նրանք ջոկի հրամատարի ցու-
ցումով շարժվում են այնպիսի ուղղությամբ, վորն
ամենից շահավետ և դիտելու և առաջադրած խնդիրը
կատարելու համար։

Հակառակորդի թվական քանակը վորոշելու հա-
մար հրացանաձիգներին հասկացողություն և տրվում
յերթական զորասյունների չափերի մասին (կլոր թվե-
րով), համեմատելով այն տեղանքում։

Հակառակորդի ուժերը վորոշել կարելի չի պահ-
պանող մասերի ուժով ու կազմով, մոտավորապես
ցույց տալ։ Վոր գունդը պահպանվում է առաջ ուղարկ-
ված գումարտակով։ գումարտակը՝ դասակով, վաշտը՝
ջոկերով, իսկ դասակից ուղարկվում են զետեքեր։

Յերթական պահպանություն մեջ գտնվող զետեքի
ուսուցումը տարվում է մոտավորապես նույն կարգով։
Յեթե հետախուզության մեջ գլխավոր ուղադրություն-
նը գործնում են հակառակորդի մասին տեղեկություն-
ներ հավաքելու վրա, ապա յերթական պահպանու-
թյան խնդիրն է՝ պահպանել գլխավոր ուժերը հակա-

ռակորդի անակնկալ հարձակումից, չես շարտելով
նրանց և այդպիսով իսկ ժամանակ շահելով պահպա-
նող զորամասերի մարտակարգի անցնելու համար։

10. ԱՆՇԱՐԺ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՄԱՐՏԻԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ

Ջոկի հրամատարն ամփոփ զրույցով ծանոթա-
ցնում է մարտիկներին զորքերի հանգստի դասավոր-
վելուն և ոժանդակիչ հարցերով յուրացնել և տալիս
հանգստի պահպանություն անհրաժեշտությունը՝ հա-
տուկ ուղարկված զորամասերով։ Միաժամանակ ընդ-
հանուր հասկացողություն և տրվում անշարժ պահ-
պանության ծառայության ու խնդիրներին մասին։
Հետագա պարապմունքներում մարտիկները պետք է
ուսումնասիրեն ժամապահի ու նրա ողնականի, գա-
ղունքների, առջնում գտնվող տեղանքի ուսումնասի-
րության, պահակների ստուգման ու կապի համար
նշանակված պարեկների պարտականությունները,
ինչպես նաև այն կարմիր բանակայինների պարտա-
կանությունները, վորոնք նշանակված են քիմիական
զիտողության համար։

Ժամապահի ու նրա ուղնակի ուսուցումը.
Հասնելով պարապմունքների համար ընտրված վայրը,
ջոկի հրամատարը բացատրում է հրացանաձիգներին
խնդիրը, հայտնելով ամփոփ տեղեկություններ հա-
կառակորդի ու հարեանների մասին։ Ոժանդակիչ հար-
ցերով նա հասկացնել է տալիս, թե պահակի համար
վորտեղ ավելի շահավետ և դասավորվել։ Այնուհետև
անցնում է դիտողության հարցին, ձգտելով, վոր կար-
միր բանակայինները յուրացնեն, թե վոչ մի իմաստ
չունի ամբողջ ջոկով դիտելը, և վոր դրա համար քա-

վական և հերթով նշանակել ժամապահներ: Դրանից հետո վորոշվում և ժամապահի դասավորության համար հարմար վայրը: Զարգացնելով այդ պարապմունքները, հրացանաձիգները ըմբռնում են, վոր վորոշ դեպքերում (յիբը ժամապահը ջոկից հեռու յի դասավորված, գիշերով, մառախուղին, ժամապահի կապը պահակի հետ բարելավելու անհրաժեշտությունը) անհրաժեշտ և ժամապահին ոգնական տալ:

Դործով մշակելով ժամապահի ու նրա ոգնականի պարտականությունները, ջոկի հրամատարը զրա համար հերթով նշանակում և հրացանաձիգներ: Այդ պարապմունքում խորացվում են դիտողություն, նշաններ գտնելու և ցույց տալու հարցերը, ոգավելով այն ամենից, ինչ գտնվում և այդ տեղամասում (մարդկանց շարժումը, գյուղացիների սայլերը, կենդանիները, հակառակորդ ներկայացնող հրացանաձիգները): Այնուհետև տեղի յի ունենում ժամապահի պարտականությունների մշակումը հակառակորդի յերևալու դեպքում: Անկախարի ազդանշաններով յերևում են հակառակորդի մեկական մարդիկ, դետքեր և այլն: Ժամապահը վոշ վոքի բաց չի թողնում թե՛ գեպի իր գորքերը և թե՛ գեպի հակառակորդը, բացի իր գործածած գետքերից ու գազոնքներից և իր անմիջական պետերից, յեթե նրանց ճանաչում և անձամբ: Պոստին մոտեցող բոլոր մարդկանց նա կանգնեցնում և «կաց» բացականչությունը 50-100 քայլ հեռավորություն վրա, իսկ գիշերով հենց վոր նկատում և: Յեթե ժամապահի պահանջով մոտեցողը կանգ չի առնում, այն ժամանակ յերկրորդ նախազգուշացումից հետո ժամապահը կրակում և: Բոլոր կանգնեցրածներին ժամապահը բաց չի թողնում մինչև պահակապետի գալը, իսկ յիբը նրանք փորձում են փախչել, կրակում և նրանց վրա:

Ժամապահը կանգնեցրածներին հետ վոշ մի խոսակցություն չի ունենում: Հակառակորդի յերևալու մասին և ընդհանրապես իր մոտ բոլոր տեղի ունեցածի մասին իմաց և տալիս պահակապետին պայմանական նշաններով ու իր ոգնականի միջոցով: Պոստին մոտեցող մենակ մարդկանց վրա, յեթե չի կարելի նրանց թույլ տալ մոտենալ պոստին և ապա բռնել պահակի կազմով, կրակում և առանց ձայն տալու: Յիբը ժամապահը պահակին սպառնացող անակնկալ վտանգի մասին չի կարողանում նախազգուշացնել պայմանական նշաններով, կրակում և:

Հերթական սովորողը պոստի վրա յե զրվում այնպես, ինչպես ժամապահների կարգման ժամանակ (պոստի հանձնումը): Հենց այդտեղ մարտիկներին պետք և հասկացողություն տալ «առք»-ի և «անցաբանի» մասին: Յուրաքանչյուր հրացանաձիգի զործողությունների քննաքննում և ամբողջ ջոկը:

Գազոնքի կազմով ծառայություն ուսուցումը պետք և տեղի ունենա, վորպես ժամապահների պարտականությունների ուսումնասիրություն շարունակություն: Զոկի հրամատարը ոժանգակիչ հարցերով հասկացնել և տալիս մարտիկներին, վոր յերբեմն տեղական պայմանների շնորհիվ հարկ և լինում մի քանի ուղղություններով ուժեղացնել դիտողությունը պահապան ուղեկալից (պահակից) 2-3 հոգի կազմով ուղարկած հատուկ մարդկանցով: Այդ կոշվում և գազոնք:

Նրանք գազոնք են կոշվում, վորովհետև նրանք վոշ վոքի չեն կանգնեցնում և չեն հարցաքննում: Նրանց վոշ վոք չի ստուգում և չի փոխում: Նրանք մնում են իրենց տեղերում այնքան ժամանակ, վորքան հրամայված և յեղել, իսկ այնուհետև վերադառ-

նում են, առանց սպասելու փոխորդի: Այն ամենի մասին, ինչ նկատում են, գաղտնքներն իմաց են տալիս ուղեկալին կամ պահակին պայմանական նշաններով կամ մեկին ուղարկելով: Միայն այն դեպքում, յերբ հակառակորդը հանկարծակի դեմ կառնի և կը հարձակվի գաղտնքի վրա, գաղտնքը կարող է կրակ բանալ: Գաղտնքը պետք է կրակ բանա նաև այն դեպքում, յերբ նկատում է հակառակորդի խոշոր ուժերի հարձակում այնքան մոտ տարածություն վրա, վոր բացի կրակելուց այլ կերպ չի կարելի իմաց տալ պահակին կամ ուղեկալին:

Այդպիսի անփոփ զրույցից հետո 2-3 հոգի նշանակվում են գաղտնք: Ջոկի հրամատարը, նշանակելով նրանցից մեկին ավագ, խնդրի և նրան տալիս և վորոշում է կապի համար պայմանական նշանները: Բոլոր սովորողներին ուղղած հարցերով ստուգում է խնդրի յուրացումը: Այնուհետև ստուգվում է, թե ինչպես մարդիկ իրենց պետք է պահեն գաղտնքում, վորպեսզի խակապես գաղտնի՝ լինի նրանց ծառայունը, այսինքն աննկատելի մնան շրջապատի համար (քողարկման միջոցներ, լուծվում, չի կարելի ծխել, խոսել և այլն): Այնուհետև հրամայվում է անցնել խնդրի կատարմանը: Գաղտնք նշանակված մարդիկ մեկնում են իրենց նշանակված տեղը, իսկ Ջոկի հրամատարը մնացած սովորողներով շարժվում է նրանց յետևից և քննում է նրանց զործողությունները, թե լցված են արդյոք հրացանները, ճիշտ են արդյոք ընտրել ճանապարհը՝ նշանակված տեղը գաղտնի հասնելու համար և այլն:

Հետո ստուգվում է գաղտնքի դասավորությունը. ճիշտ է արդյոք քողարկվել, ինչպես են դիտողություն պայմանները և այլն:

Ավարտելով գաղտնքի դասավորության խնդիրը, մշակվում է գաղտնքի հետագա պարտականությունները: Դրա համար Ջոկի հրամատարը միջանկյալ խնդիրներ է տալիս: Որինակ՝ 1) ահա այն ձորակի առվի ուղղությամբ շարժվում է հակառակորդի յերկու հետախույզ, ինչ պետք է անեք. 2) ուղիղ դեպի ձեր դասավորությունը շարժվում է հակառակորդի յերեք հրացանաձիգ, 3) դուք նկատել եք այս անտառակում մոտ մի գտակ հակառակորդ, վորն ուղիղ դեպի ուղեկալն է շարժվում. 4) ձեր մոտից անցնում են մեր հետախույզները:

Բանավոր միջանկյալ խնդիրներին հետ միասին անհրաժեշտ է մարդիկ ուղարկել, վորոնք կը պահեցնեն հակառակորդին, և ապա պետք է հետևել գաղտնքի գործողություններին:

Այնուհետև անցնում են կապի համար, սեղանի հետադարձ համար, պահակների ստուգման համար ուղարկված պարեկի ծառայության ուսումնասիրության:

Սկզբում Ջոկի հրամատարը զրույցով հասկացողություն է տալիս կարմիր բանակայիններին, թե ինչի համար և յերբ են ուղարկվում պարեկները, և ապա անցնում է նրանց ծառայության գործնական մշակման. պարեկի ուժն է 2-3 մարտիկ, վորոնք կովում են պարեկապան: Պարեկապաններից մեկը նշանակվում է ավագ և նրան տրվում է խնդիրը և հարցերվում է ասքը: Պարեկը շարժվում է գաղտնի, վորքան կարելի յե զգուշությամբ և ուշադրությամբ, վորպեսզի հանկարծ հակառակորդի ձեռքը չընկնի: Կապի համար ուղարկված պարեկը պետք է հասնի այն ուղեկալին, վորի մոտ նշանակված է: Ավագ պարեկապանը ներկայանում է ուղեկալի պետին, զեկու-

ցում եւ այն ամենի մասին, ինչ նկատել եւ ճանապարհին եւ վերադառնալու թույլտվութիւն եւ հարցնում: Վերադառնալով, նա դարձյալ գեկուցում եւ իրեն ուղարկող պետին այն ամենի մասին, ինչ նկատել եւ ճանապարհին: Պահանքի ստուգման համար ուղարկված պարեկը պետք եւ համողվի, թե արդյոք աշաւուրջ եւ ժամապահը, պատրաստ են արդյոք պահակի մնացած մարդիկ, եւ այդ ամենի մասին գեկուցի իր պետին: Տեղանքի հետազոտման համար ուղարկվող պարեկին ցուցումներ են տալիս ընթացողու, տեղամասի հետազոտման համար տրված ժամանակի մասին, եւ այն մասին, թե ինչի վրա պետք եւ դարձնել հատուկ ուշադրութիւն:

Շարժման ժամանակ պարեկը գնում եւ բոլոր ծածկարանները, ժամանակ առ ժամանակ կանգ եւ առնում եւ ակնաջ դնում: Հակառակորդի մենակ մարդկանց հանդիպելիս նրանց գերի յե վերցնում եւ հասցնում մոտավոր պահակը կամ ուղեկալը եւ ապա շարունակում կատարել իր խնդիրը: Յերը հանդիպում եւ ավելի ուժեղ հակառակորդին, գաղտնի հետեւում եւ նրան, իմաց տալով այդ մասին ուղեկալին (պահակին):

Այս ամենը պետք եւ մշակվի խնդիրներով ու միջանկյալ ավյալներով: Դրա համար ջոկի հրամատարը կարգում 2-3 մարտիկ, նրանցից մեկին նշանակում եւ ավագ եւ տալիս եւ խնդիրը: Ստուգելով խնդրի յուրացումը, հրամայում եւ մեկնել կատարելու այդ խնդիրը, իսկ ինքը մնացած սովորողների հետ միասին գնում եւ նրանց յետեից եւ միջանկյալ խնդիրներ եւ տալիս, կատարելով գործողութիւնները վերլուծումն ամբողջ ջոկով:

11. ԳԻՇԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոգային նավատորմի իրատ դարգացումը, այստեղից եւ հակառակորդի կողմից ոգից լավ գիտելու հնարավորութիւնը շատ հաճախ ստիպում են զորքերին գիշերով գործել: Այդ պատճառով գիշերային աշխատանքին պետք եւ լավ պատրաստված լինեն բոլոր մարտիկները: Գիշերային գործողութիւններին մարտիկի պատրաստվելը շատ եւ տարբերվում ցերեկը կատարած աշխատանքների պատրաստութիւնից:

Գիշերային խավարը դժվարացնում եւ գիտողութիւնը: Աչքերի փոխարեն գլխավոր տեղն են բռնում ակնաջները: Յերեկը վորեն ձայն կամ աղմուկ լսելով, մենք անմիջապես նայում ենք դեպի այն կողմը, վորտեղից գալիս եւ այդ ձայնը, վորպեսզի աչքերով վորոշենք նրա պատճառը: Իսկ գիշերով այդ կարելի չե անել գլխավորապես ակնաջներով: Այդ պատճառով մարտիկը պետք եւ կարողանա տարբերել ձայները, վորոշել, թե վորտեղից եւ ինչից են առաջանում նրանք: Միևնույն ժամանակ գիշերով բոլոր ձայներն ավելի ուժեղ են թվում, քան թե ցերեկով: Մինչև իսկ ամենաթույլ ձայնը գիշերով լավ լսելի չի լինում: Այդ պատճառով մարտիկը պետք եւ վարժվի բոլոր գործողութիւնները կատարել անաղմուկ: Աչքով գիտելը նույնպես գիշերով փոքր ինչ այլ եւ, քան թե ցերեկով: Յերեկով մենք լավ տեսածիւր ունենալու համար բարձրանում ենք բարձր տեղեր, մինչդեռ գիշերով, ընդհակառակն՝ ավելի լավ եւ յերևում «վարից վեր»: Գիշերով առանձին տեղական առարկաները մեզ միանգամայն այլ են թվում, քան թե ցերեկով: Չափազանց հաճախ անփորձ մարտիկը վորեն առարկան, վորն անշարժ եւ գտնվում, ընդունում եւ շարժվող ա-

աւրկայի տեղ: Այստեղից եւ առաջանում ե ջղայնութիւն, իսկ յերեմի նաեւ խուճապ:

Այս բոլոր գիշերային առանձնահատկութիւններն եւ հենց կարծես վորոշում են մարտիկի՝ գիշերային գործողութիւններին պատրաստվելը:

Մարտիկի անհատական ուսուցման շրջանում առնվազն 3-4 անգամ տեղի կունենա գիշերով դաշտ դուրս գալը: Առաջին անգամ գիշերով դաշտ դուրս գալիս ժարտիկին պետք ե ցույց տալ գիշերային բոլոր առանձնահատկութիւնները, վորպէսզի նրա մեջ այդ ժասին մնա ընդհանուր տպավորութիւն: Մեկնելուց առաջ ջոկի հրամայարը բացատրում ե մարտիկներին առաջիկա ուսուցման նպատակը ե ամփոփ մատնանշում ե գիշերային աշխատանքի առանձնահատկութիւնները: Դաշտում շարժվելով, ոժանգակիչ հարցերով նա ցույց ե տալիս, վոր գաղտնադահության ե անաղմուկ շարժվելու համար հարկավոր ե լավ հարմարեցնել հանդերձանքը, վորպէսզի վոչինչ չթափահարվի ու չզըրնդա: Վորպէսզի կարմիր բանակայինները լավ համողվեն այդ բանի մեջ, նա ջոկում ե յերկու մարտիկ, վորոնցից մեկը լավ ե հարմարեցրել իր հանդերձանքը, իսկ մյուսը նախադգուշական միջոցներ ձեռք չի առել, ե հրամայում ե այդ յերկուսին շարժվել տարբեր կողմեր: Մընացած կարմիր բանակայիններին հրամայում ե աւանջ գնել ե վորոշել, թե նրանցից վորն ե ավելի գաղտնի քայլում: Այնուհետեւ ցույց ե տրվում բոլոր գործողութիւնները կամաց, անաղմուկ կատարելու անհրաժեշտութիւնը: Զոկից դեպի վորեւ ե մի կողմն ուղարկված կարմիր բանակայինի վրա ցույց ե տալիս, թե ինչպէս կարելի յե խուսափել այդ բոլորից. հազալ, յեթե զսպել չի կարելի, հարկավոր ե կամ

թննոցի, կամ կորդակի (շեւ) մեջ, հրացանը պետք ե լցնել դանդաղ ե կամաց, առանց չըխկչըխկացնելու փսկաղակը: Ծխելը գիշերով արգելվում ե:

Շարունակելով շարժումը, ցույց ե տալիս, թե ինչպէս պետք ե կամաց գնել վտարերը: Պինդ գետնին վտարը դրվում ե սկզբում վտարի ծայրից, իսկ փափուկ գետնին՝ ընդհակառակն, կրունկից: Այնուհետեւ ցույց ե տալիս, թե ինչպէս պետք ե անաղմուկ շարժվել խոտերով, թփուտներով ե այլն: Ոգտվելով ճանապարհին յեղած արգելքներով (ցանկապատ), ցույց ե տալիս խոչընդոտներն անաղմուկ հաղթահարելու միջոցները: Հետո դասավորելով կարմիր բանակայիններին վաղորոք նշված վայրում, կատարվում ե զանազան ձայներ վորոշելու վարժութիւն: Դրա համար կարելի յե ոգտագործել ամեն տեսակ ձայներ, վոր գալիս են շարունակ ճանապարհներից, գյուղերից ե այլն ե ձայներ հանել տալ հատուկ ուղարկած մարդկանցով: Կարմիր բանակայինները պետք ե ցույց տան ձայների ուղղութիւնն ու պատճառները: Հենց այդտեղ պետք ե ցույց տալ սայլերի աղմուկը, ձիերի դրոփյունը, անիմլերի դրոփոցը, քայլերի ձայնը, մոտ սողացող հակառակորդի ձայնը, կոտրած փայտի չըրխկոցը, հրացան լցնելու ձայնը, կամաց խոսակցութիւնը, թիի ձայնը՝ խրամատ փորելիս ե այլն: Հետո ցույց են տալիս գիշերային դիտողութիւն ձևերը: Այդ վարժութիւնը ցանկալի յե նկատել նույն տեղում, վորտեղ յեղել են ցերեկվա պարպմունքներ, ե վորտեղ տեղանքն ավելի յե ծանոթ կարմիր բանակայիններին: Զոկի հրամատարն որինակով ցույց ե տալիս, վոր գիշերով դիտողութիւն համար ամենից լավ «պառկած» դրութիւնն ե: Դրա համար ջոկի հրամատարը, մյուսների համար ան-

Նկատելի կերպով, ուղարկում ե կարմիր բանակային-
ներին մեկին զեպի մի կողմը և հրամայում ե պայմա-
նական նշանով շարժվել զեպի ջուկը: Մնացած կար-
միր բանակայիններին նա դասավորում ե զանազան
դրություններով (պառկած, նստած, ու կանգնած)
և հրամայում ե զիտել զեպի այն կողմը, վորտեղից
պետք ե յերևա ուղարկած կարմիր բանակայինը:
Իհարկե, ամենից առաջ նրան կնկատեն նրանք,
ովքեր զիտում եյին պառկած դրությամբ: Այդ որի-
նակը պետք ե հաստատել ըստարությամբ, վոր զի-
շերով զիտվում են այն առարկաները, վոր պատկերա-
նում են յերկնքի ֆոնի վրա, վորովհետեւ նա միշտ
ավելի լուսավոր ե լինում, քան թե գետինը: Այնու-
հետեւ մշակվում ե այն հարցը, թե վորտեղից լավ ե
գիտել. արդոք «վերից վար», ինչպես ցերեկն եր, թե
«վարից վեր»: Այդ միաժամանակ ցույց ե տրվում
գործնապես: Հետո կողմնորոշում են կատարում աստ-
ղերով ու կողմնացույցով:

Հաջորդ գիշերային պարապմունքներում կարմիր
բանակայինները վարժվում են այդ բոլորի մեջ:

Գիշերային յերկրորդ դաշտային պարապմունքը
ցանկալի յե ոգտագործել սովորեցնելու համար կար-
միր բանակայիններին ժամապահի, նրա ռզնականի,
գաղտնքի կազմի գիշերային ծառայությունը: Դրա
համար պարապմունքի տեղամասը պետք ե նույնը
լինի, վորտեղ անցել ե ժամապահի ուսուցումը ցերե-
կով: Յեթե այդ հնարավոր չե անել, հարկավոր ե լու-
սով դալ այդ տեղամասը, վորպեսզի ցերեկով կարճ
անցնեն պահակի ու ժամապահի դասավորությունը,
և ապա անցնեն գիշերային դասավորությանն ու ծա-
ռայությանը, շեշտելով ժամապահի ցերեկով ու գիշե-
րով դասավորության մեջ յեղած տարբերությանը:

Պարագան, խնդիրները և պահակի դասավորու-
թյան վայրը ցույց տալուց հետո, նշանակվում են ժամա-
պահը և նրա ոգնականը: Այնուհետեւ կարմիր բանա-
կայինները հերթով վորոշում են այնտեղը, վորտեղ
ավելի հարմար ե տեղավորել ժամապահին: Այդ հար-
ցի լուծման ժամանակ ըստարություն ե ցերեկով և գի-
շերով դասավորելու տարբերությունը: Յերեկով ժա-
մապահը դասավորվում ե ավելի բարձր տեղում, իսկ
գիշերով ընդհակառակն, հարկ ե լինում ցած իջնել
վորոհետեւ գիտելով ցածից զեպի վեր, կարելի յե ավե-
լի հեշտ հայտաբերել յերկնքի ֆոնի վրա պատկերա-
ցող հակառակորդին:

Յերեկով ժամապահի տեսածիրը լավացնելու հա-
մար հարկ ե լինում յերբեմն, քողարկվելով, գիտել
կանգնած դրությամբ: Իսկ գիշերով ավելի լավ ե գի-
տել պառկած դրությամբ: Գիշերով շատ բան հարկ
ե լինում վորոշել լսողությամբ, ուստի հարկավոր ե
ըստ հնարավորին, հեռանալ այնպիսի առարկաներից,
վորոնք կարող են խանգարել իրենց ձայնով (գոլ ծա-
րան, ջրադալ և այլն):

Այնուհետեւ ջուկի հրամատարը ցույց ե տալիս
միևնույն առարկաների տեսանելիության ու գծագրու-
թյան տարբերությունը ցերեկով ու գիշերով: Հետո
պարզվում ե այն հարցը, թե ինչ միջոցներով ժամա-
պահը պետք կապ պահի պահակի հետ: Վերջապես՝
ջուկի հրամատարը հրամայում ե ժամապահին ու
նրա ոգնականին գրավել իրենց տեղերը:

Հակառակորդի կողմից ժամապահի համար ան-
նկատելի ուղարկվում են 2—3 մարտիկ զանազան
պատվերներով. մեկը պետք ե գաղտնի մոտենա թվի-
րի կողմից, մյուսը պետք ե շարժվի բլբակի վրայով
և այլն:

Մնացած սովորողները ջոկի հրամատարի հետ միասին գիտում են ժամապահի և նրա ոգնականի գործողությունները: Այնուհետև տրվում է «հավաք» հրահանգը և կատարվում է կարճ վերլուծում: Վերլուծումից հետո, վորպես ժամապահ ու ժամապահի ոգնականներ նշանակում են մյուսները: Նոր ժամապահի կարգումը կատարվում է վարժական նպատակով, վորպես պոստի հանձնում: Վերլուծման ժամանակ շեշտվում է, վոր գիշերով, ավելի քան յերես անհրաժեշտ է ժամապահին ոգնելու համար նշանակել գաղոնքներ: Այնուհետև ոժանգակիչ հարցերով վորոշվում է այն տեղը, ուր տվյալ խնդրի ու պարագայի համաձայն հարկավոր եր գնել գաղոնք: Նշանակվում են գաղոնքը, դեպի հակառակորդի կողմն ուղարկվում են 2—3 մարտիկ և նույն կարգով մշակվում են գաղոնքի պարտականությունները:

Հաջորդ գիշերային դաշտային պարապմունքում հարկավոր է անցնել յերթական պահպանություն միջգտնվող դիրտակալի ծառայությունը գիշերով: Այստեղ նախընթաց գիշերային պարապմունքներում ամբողջ անցածն ամրացնելուց բացի հարկավոր է մշակել շարժման ժամանակ գիշերային դիրտողություն ձևերը, տեղական առարկաները գննելու տեխնիկան ու կապի միջոցները:

Վարժությունից առաջ ամփոփ գրույցով ջոկի հրամատարը ցույց է տալիս, վոր այն ժամանակ, յերը ցերեկով շարժման համար ընտրում են ծածկված ճանապարհներ (թփեր, խոտ և այլն) գիշերով հարկավոր է լինում դրանից հրաժարվել, վորպեսզի խուսափեն այդպիսի վայրերում շարժվելիս սռաջայող աղմուկից:

Գիշերով ավելի լավ է շարժվել բաց տեղանքով:

Ցերեկվա շարժման ժամանակ տեղանքը գննում են մի բնագծից (դիրտակետից) դեպի մյուսը: Գիշերով դիրտակալը ստիպված է լինում գիտելու համար կանգ առնել, ականջ դնել և ավելի զգուշ լինել: Կապի միջոցները նույնպես տարրերվում են ցերեկվանից:

Տեսողական պայմանական նշանները գիշերով պետքական չեն: Այստեղ կապի համար ել հարկ է լինում մեծ մասամբ ոգտվել լսողությունից (նմանողություն թռչունների, կենդանիների, միջատների ձայներին, թեթև շրթից վորև է առարկայով և այլն):

Այնուհետև տրվում է պարագան, խնդրը և յերկու մարտիկ նշանակվում են դետք: Դետքի ավագը նշում է շարժման ճանապարհը, և դետքը շարժվում է: Ջոկի հրամանատարը մնացածների հետ միասին անձայն շարժվում է դետքի յետևից, հրամայելով նկատել այս կամ այն անճշտությունները: Ուշադրություն են դարձնում դիրտակալների իրար միջև ունեցած փոխադարձ գործողությունների վրա (մեկը շարժվում է առաջ, իսկ մյուսն ականջ է դնում), տեղանքին հարմարվելու վրա (խուսափում են այնպիսի տեղերից, վորտեղ կարելի չէ պատկերանալ յերկնքի ֆոնի վրա), խոչընդոտներն անձայն հաղթահարելու վրա, ինչպես նաև կապի համար պայմանական նշանների գործադրություն վրա: Նշված կետում ջոկի հրամատարը կանգնեցնում է դիրտակալներին և բոլոր կարմիր բանակայիններին հետ միասին կատարում է վերլուծում: Այնուհետև փոխվում են դետքի մարդիկ, և պարապմունքը շարունակվում է:

Հետագայում մշակվում է այն հարցը, թե ինչ պետք է անի դետքը, յերը կհանդիպի հակառակորդին: Դրա համար վաղորոք ընթացողու վրա դասա-

վորվում են 1—2 մարտիկ և ջոկի հրամաստարի պայմանական նշանով կատարում են այս կամ այն գործողությունը: Այստեղ պետք է քննել յերկու դեպք. դետքի գործողությունը, յերբ նա հակառակորդին նրկատում է վազորոք, և նրա գործողությունը, յերբ նա հանկարծ է ընդհարվում հակառակորդի հետ: Առաջին դեպքում հակառակորդին պատկերացնող բանակայինը վորեն գործողություն է կատարում, վորով կարելի չէ վորոշել հակառակորդի ներկայությունը (խրամատ փորել, հրացան լցնել, ծառի ճյուղեր կոտրել, շարժում և այլն): Յերկրորդ դեպքի համար կատարվում են սինավամփուշտների արձակումներ կամ հանկարծակի կարճ տարածություն վրա մոտենում են դետքին:

Այդ պարապմունքի շարունակությունը կլինի դետքի ուսուցումը հետախուզությունում: Կազմակերպելով այդ պարապմունքը նույն ձևով, այստեղ պետք է ուշադրություն դարձնել անաղմուկ շարժման վրա, յերբ գտնվում են հակառակորդից շատ մոտիկ, պետք է վարժվել գաղտնի մոտենալ, անաղմուկ գրավել հակառակորդի պոստը, անցնել նրա դասավորություն խորքը, հաղթահարել լարափակոցներն ու խրամատները և կարողանալ վորոշել հակառակորդի դրությունն ու գործողությունները գիշերով:

Փազտնի մոտենալով հակառակորդի պոստին, մարտիկները պետք է աշխատեն մոտենալ նրան չորս կողմից և հանկարծ առանց ձայնի և աղմուկի բռնել հակառակորդին գործելով հարկ յեղած դեպքում, սվիններով և հրացանի կոթերով:

Բոլոր հարցերը մշակվում են գործնականապես, խնդիրներով: Լարափակոցների հաղթահարման տես-

նիկան հարկ կլինի կատարել ստալյորական հրապարակում, յեթե այդ նպատակով պարապմունքների համար չի կհանվորված հատուկ տեղամաս, վորը մատչելի չէ միայն վաշտի կամ գումարտակի համար:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	62
1. Վարժություն կազմակերպումը . . .	3
2. Ընդհանուր ծանոթացում տեղանքին յեվ նրա նշանակությունը ուղղմական գործում	13
3. Տեղանքի ոգտագործումը	18
4. Հակառակորդի աչքից ու զնդակներից ծածկ- վելը շարժման ժամանակ	20
5. Տեղանքի ոգտագործումը կրակ մղելու համար	24
6. Կողմնորոշում	26
7. Դիտողություն	31
8. Կապի վարարկները	38
9. Դիտակալի ծառայություն ուսուցումը հե- տախուզությունում յեվ յերթական պահ- պանությունում	43
10. Անշարժ պահպանություն մեջ գտնվող մար- տիկի ծառայություն ուսուցումը	47
11. Գիշերային գործողություններ	53





ՀՀ Ազգային գրադարան



NL0212580

42. 199

ԳԻՆՆ Ե 30 ԿՈՊ.